

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Սարգարապատն Արցախ

Այս օրերուն դարձեալ կը նշենք 1918 թուականի Մայիսին Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի յաղթական ճակատամարտերու տարեդարձը: Անհաւասար պայքարի մէջ գոնուելով հանդերձ, Հայ ժողովուրդը արձանագրեց իր պատմութեան մեծագոյն սխրագործութիւններէն մէկը: Ընորհիւ իր գաւակներու միասնականութեան ու մարտնչող ոգիին՝ դէպի Երեւան ներխուժող թրքական զօրքերը պարտութիւն մատուցեցան ու դիմեցին նահանջի: Պատերազմի դաշտին վրայ արձանագրուած այս յաղթանակներով վերականգնուեցաւ հայոց պետականութիւնը՝ հինգ հարիւր տարիներու ընդմիջումէ ետք:

Տասնամեակներ ետք Հայութեան պարտադրուեցաւ երկրորդ պատերազմ մը: Դարձեալ, շնորհիւ իր գաւակներու անխախտելի կամքին, արձանագրուեցաւ քսաներորդ դարու մեր երկրորդ մեծագոյն յաղթանակը՝ որու շնորհիւ ազատագրուեցան Արցախն ու Արցախահայութիւնը:

Սարգարապատի ճակատամարտերը եղան կարճատեւ, իսկ Արցախեան ազատամարտը կը շարունակուի երեսուն տարիներ ի վեր: Թշնամին տակաւին պատրաստ չէ ընդունելու իր պարտութիւնը եւ համակերպուելու Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին հետ:

Ինչպէս Սարգարապատի ճակատներուն վրայ, նոյնպէս ալ Արցախեան պատերազմի ընթացքին մեր յաղթանակներու միակ գրաւականը եղաւ մեր ժողովուրդի միասնականութիւնն ու համերաշխութիւնը:

Վերջին շաբաթներուն Հայաստան-Արցախ անքակտելի կապերու պատերը որոշ ճեղքեր ցոյց կու տան: Հայաստանի մէջ ընթացող ներքաղաքական իրադարձութիւններու մէջ կը ներքաշուի Արցախի գործօնը: Այս իրավիճակը Հայաստանի ժողովուրդին ու նաեւ ղեկավարութեան մօտ կ'ստեղծէ որոշ անհանգստութիւն: Այս երեւոյթները մտահոգիչ են ու անընդունելի: Իրաւունք չունինք թոյլ տալու նման «շքեղութիւններ», ոչ իսկ կարճ ժամանակուայ համար: Արցախի Հանրապետութեան նախագահի բացակայութիւնը Մայիս 28-ի տօնակատարութիւններէն նշմարելի էր ու անհանգստացնող: Մեր թշնամիները հրճուանքով կը հետեւին այս բոլորին:

Սփիւռքահայութիւնը անմասն չմնալով Հայրենիքի իրադարձութիւններէն, ինք եւս մտահոգուած է այս կացութեամբ: Կը յուսանք, որ շատ շուտով ամպերը կը հեռանան մեր ժողովուրդի երկնակամարէն ու Սարգարապատէն մինչեւ Արցախ կը շարունակուի մեր ժողովուրդի միասնական երթը:

«ՄԱՍԻՍ»

Հայաստանի Մէջ Նշուեցան Մայիսեան Զերոսամարտերուն Եւ Առաջին Հանրապետութեան Տօները

Հայաստանի ղեկավարութիւնը՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ, Մայիսի 28-ին աչքեւեցին Սարգարապատի յուշահամալիր, ուր կայացան Մայիսեան Զերոսամարտերուն եւ Հանրապետութեան տօնին նուիրուած հանդիսութիւնները: Յուշահամալիրին մէջ տեղի ունեցած արարողութիւններուն մասնակցեցան նախագահ Արմէն Սարգսեան, Ազգային Ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան Գարեգին երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ բարձրաստիճան պաշտօնեաներ եւ հիւրեր:

Հայաստանի քաղաքական ու հոգեւոր առաջնորդները ծաղկեպսակներ դրին Սարգարապատի ճակատամարտի հերոսներու յիշատակը յաւերժացնող յուշակոթողին եւ յարգանքի տուրք մատուցեցին անոնց յիշատակին:

«Այսօր մենք տօնում ենք մեր հազարամեայ պատմութեան ամենակարեւոր իրադարձութիւններից մէկը՝ Առաջին Հանրապետութեան հիմնադրման օրը: 1918 թուականի Մայիսի 28-ին Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի, Սարգարապատի Զերոսամարտերից յետոյ հռչակուեց Հայաստանի անկախ Առաջին Հանրապետութիւնը», - ըսաւ Փաշինեան՝ շարունակելով. - «Դա տեղի ունեցաւ մի ժամանակաշրջանում, երբ թուում էր՝ հայ ժողովրդի պատմութիւնը հասել է իր ավարտական փուլին: Կիլիկեան Հայաստանի անկումից ուղիղ 500 տարի անց պետականութիւն չունեցող հայ ժողովուրդը ենթարկուել էր ծանրագոյն մի աղէտի՝ ցեղասպանութեան: 1,5 միլիոն հայ սրի էր քաշուել, հարիւր հազարաւորները դարձել էին փախստական եւ հայ լինելն ինքնին վտանգաւոր



Հայաստանի ղեկավարութիւնը ծաղկեպսակներ դրին Սարգարապատի ճակատամարտի հերոսներու յիշատակը յաւերժացնող յուշակոթողին

չինեան՝ շարունակելով. - «Դա տեղի ունեցաւ մի ժամանակաշրջանում, երբ թուում էր՝ հայ ժողովրդի պատմութիւնը հասել է իր ավարտական փուլին: Կիլիկեան Հայաստանի անկումից ուղիղ 500 տարի անց պետականութիւն չունեցող հայ ժողովուրդը ենթարկուել էր ծանրագոյն մի աղէտի՝ ցեղասպանութեան: 1,5 միլիոն հայ սրի էր քաշուել, հարիւր հազարաւորները դարձել էին փախստական եւ հայ լինելն ինքնին վտանգաւոր

էր կեանքի համար: Եւ թուում էր, թէ ստեղծուած են բոլոր նախադրեալները, որ հայ ժողովուրդը յանձնուի իր պատմութեան առաջ, ճանաչի իր պարտութիւնը, կորցնի իր ինքնութիւնը, մոռանայ իր պատմութիւնը եւ հրաժարի ապագայի նկատմամբ ունեցած որեւէ յաւակնութիւնից: Բայց տեղի ունեցաւ հակառակը, տեղի ունեցաւ անսպասելին եւ հայ ժողովուրդը

Շար.ը էջ 5

Հայկական, Յունական Եւ Կաթոլիկ Եկեղեցիները Համաձայնած Են Վերակառուցել Սուրբ Յարութեան Տաճարի Հիմքը



Երեք համայնքներու Հոգեւոր առաջնորդները կը ստորագրեն համաձայնագիրը

Մայիս 27-ին, Ֆրանչիսկեաններու Ս. Փրկիչ վանքին մէջ տեղի ունեցած է Սուրբ Յարութեան տաճարի Հիմքի ու Սուրբ Գերեզմանի վերականգնման ու նորոգման համաձայնագրի ստորագրութեան արարողութիւն՝ Սթամբուլի Քրիստոս Կրօնաբանութեան Հոգեւոր առաջնորդներու՝ Երուսաղէմի Հայ Պատրիարքի, Յոյն Պատրիարքի եւ Սուրբ Երկրի Կուս-

թոսի կողմէն: Հայկական, յունական եւ կաթոլիկ եկեղեցիները համաձայնած են իրականացնել վերականգնման աշխատանքները: Նշուած է, որ այս նախագիծը յաջորդած է Սուրբ Գերեզմանի վերականգնման յաջողած ծրագրին: Աշխատանքները պիտի իրա-

Կարօ Փայլանի Ահագնգը. Թրքական Ֆիլմաշարին մէջ Հայը կը Ներկայացուի Որպէս Ստոր Եւ Դաւաճան Սարդ

Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր, ընդդիմադիր «Ժողովուրդներու ղեմնկրատական» (HDP) քրտամէտ կուսակցութեան անդամ Կարօ Փայլանը խափարին քննադատած է թրքական պետական հեռուստաընկերութիւնը (TRT):

Պատճառն այն է, որ Պոլսոյ քաղաքապետի ընտրութիւններուն ընդառաջ հեռուստատարիքը կը ցուցաբերէ ակնյայտ կողմնակալութիւն: Փայլանը նաեւ նշած է այն երեւոյթի վտանգաւորութեան մասին, երբ հեռուստատեսութիւնը պատմական-քաղաքական ֆիլմաշարերու միջոցով կը փորձէ տարբերութիւններ յղել տարբեր հասցէատէրերու:

Որպէս օրինակ Փայլանը մատնանշած է պատմական փաստերու ակնյայտ խեղաթիւրմամբ նկարահանուած «Գահանիստ. Ապտուլ-Համիտ» (Payitaht Abdülhamid) հեռուստաշարը, որ այժմ կը ցուցադրուի TRT-ով ու յատուկ ուղերձներ կը պարունակէ:

Շար.ը էջ 5

Շար.ը էջ 5

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Աննախադեպ Այց Երեւան. Հայ-Չինական Պատմական Համաձայնագիր

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Պաշտօնական Երեւանը նախորդ ամսուայ վերջին բարձր մակարդակով չմասնակցեց «Մետաքսի ճանապարհ» երկրորդ ֆորումին (Հայաստանը սահմանափակուեց բնապահպանության նախարարի մասնակցությամբ), ինչը տարբեր գնահատականների ու մեկնաբանությունների տեղիք տուեց Հայաստանում, մասնաւորապէս՝ նախկին վարչապետ Հրանտ Բագրատեանը ֆէյսբուքեան մի քանի գրառումներով անդրադարձաւ Հայաստանի կորսուած հնարաւորութիւններին: Այնուամենայնիւ, Պեկինը գտաւ բացը լրացնելու հարթակ, ու ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Մայիսի 14-ին իր կաբինետի մի քանի անդամների հետ միասին աշխատանքային այցով մեկնեց Պեկին՝ մասնակցելու «Ասիական քաղաքակրթութիւններ» երկխօսութիւն» համաժողովին: Այցի շրջանակներում Հայաստանի վարչապետը հանդիպել է Չինաստանի նախագահ Սի Շինփինի, վարչապետ Լի Քեյցանի, ինչպէս նաեւ չինական մի քանի խոշոր ընկերութիւնների հետ:

Փաշինեանի այցը ու ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները երէկ որոշակի ամրապնդում ստացան. Երեւան էր ժամանել Չինաստանի ժողովրդական Հանրապետութեան պետական խորհրդի

անդամ, արտաքին գործերի նախարար Վան Ին, որը հանդիպումներ է ունեցել Հայաստանի նախագահի, վարչապետի ու արտգործնախարարի հետ:

Չինաստանի արտգործնախարարի այցի հիմնական արդիւնքն, անշուշտ, «ՀՀ կառավարութեան եւ ՉժՀ կառավարութեան միջեւ սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտօնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին» համաձայնագիրն է, ինչը կարող է խթանել Հայաստանում չինական ներդրումների ներգրաւման գործընթացին, ինչպէս նաեւ՝ տուրիզմի զարգացմանը: Այս համատեքստում վարչապետ Նիկոլ Փաշինեանը առաջարկել է համատեղ քննարկել նաեւ օդային ուղիղ հաղորդակցութեան հաստատման հեռանկարները: Այս առաջարկութիւնը, կարծես թէ, արժանացել է չինաստանցի բարձրաստիճան հիւրի հաւանութեանը եւ յուսանք, որ Երեւանում ստորագրուած պատմական համաձայնագիրն ու բանաւոր պայմանաւորուածութիւնները կը դառնան երկկողմ յարաբերութիւնների զարգացման կարեւոր ազդակ:

Երէկ երկուստէք կարեւորուել է Հիւսիս-հարաւ աւտոմայրուղու կառուցման գործում համագործակցութիւնը: Ընդ որում՝ շատ կարեւոր է, որ այն դիտարկուում է ոչ միայն որպէս ճանապարհային

ենթակառուցուածքի զարգացման ծրագիր, այլեւ հաղորդակցութեան միջանցքի ձեւաւորման հնարաւորութիւն, որը կարեւոր օղակ կարող է հանդիսանալ «Մէկ գօտի, մէկ ճանապարհ» նախաձեռնութեան համատեքստում: Ուշագրաւ է, որ Չինաստանի ԱԳ նախարարը Հիւսիս-հարաւ աւտոմայրուղու նախագիծը դիտարկել է տարածաշրջանային զարգացման եւ կայունութեան ապահովման համատեքստում: Սա խօսում է այն մասին, որ Պեկինը հայ-չինական յարաբերութիւնները դիտարկում է աւելի կլորբալ՝ ռեգիոնալ համատեքստում: Վան Իի երեւանեան այցը կարեւոր, նոյնիսկ պատմական իրադարձութիւն է եւ յուսանք, որ մեր իշխանութիւնները պատկերացնում են հայ-չինական յարաբերութիւնների խորացման եւ զարգացման կարեւորութիւնն ու նշանակութիւնը: Կլորբալ քաղաքականութեան մէջ այլեւս հնարաւոր չէ չնկատել Չինաստանի ազդեցութեան հարածուցումն ու այս պարագայում հայ-չինական յարաբերութիւնները կարեւոր, անգնահատելի դեր ունեն Հայաստանի արտաքին քաղաքականութեան դիւերսիֆիկացման գործում, ինչն, անշուշտ, նպաստելու է մեր երկրի ինքնիշխանութեան ամրապնդմանը, սուբեկտութեան մեծացմանը, տարածաշրջանում կայունութեան ամրապնդմանը, ինչը շատ կարեւոր գործօն է

նաեւ ԼՂ խնդրի կարգաւորման գործընթացում:

Չինաստանն անչափ կարեւոր ուղղութիւն է Հայաստանի համար, սակայն խիստ սկզբունքային է, որպէսզի Հայաստանի իշխանութիւնները՝ տնտեսական համագործակցութիւնն ու չինական հնարաւոր ներդրումները կարեւորելուց զատ, հայ-չինական յարաբերութիւններում առաջնահերթութիւն համարեն քաղաքական օրակարգի ձեւաւորումը: Պեկինին՝ առաջին հերթին, հետաքրքրում են աշխարհաքաղաքական խնդիրներն ու, բնականաբար՝ չինական ներդրումներ կարելի է ակնկալել՝ երկու երկրների միջեւ քաղաքական ընդհանուր օրակարգի ձեւաւորման պարագայում:

Առհասարակ՝ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը պէտք է դուրս գալ ինտեգրոն օւթմից ու դառնայ նախաձեռնողական բոլոր ուղղութիւններով, հակառակ պարագայում՝ աշխարհի ուժային կեդրոններում կը նուազի հետաքրքրութիւնը մեր երկրի նկատմամբ ու անցած տարի Հայաստանում տեղի ունեցած մասշտաբային իրադարձութիւններն այդպէս էլ չեն կապիտալիզացուի արտաքին յարաբերութիւններում՝ վերածուելով չօգտագործուած հնարաւորութեան, ինչն անդառնալի կորուստ կը լինի արագ զարգացող աշխարհի պարագայում: Մեր իշխանութիւնները պէտք է հասկանան, որ Հայաստանի արտաքին գործընկերների համար ոչ այնքան կարեւոր է բուն յեղափոխութեան փաստը, որքան՝ դրա կիրառական արդիւնքները, կապիտալիզացիան:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Անհամարժեքութեան Մոլախոտը

Ընդդիմադիր քարոզչամիջոցները շարունակում են թէժ պահել «հայաստանցի-ղարաբաղցի» թեման՝ լրնթացաւ այդ անհեթեթ դիակուրսի համար մեղադրելով իշխանութիւններին: Իսկ շարքային քաղաքացիները՝ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Արցախում, այս ինֆորմացիոն թոհուրոհում չեն կարողանում հասկանալ, թէ ինչ է տեղի ունենում իրականում:

Հասկանալի է, որ տասնամեակներ շարունակ Ատրպէյճանն էր ձգտում ցանկացած դեպքում հակասութիւններ սերմանել Հայաստանի եւ Արցախի միջեւ, ու հիմա, երբ Հայաստանում կամ Արցախում որեւէ անուղեղ որեւէ հարթակից կամ սոցիալքերում այս թեմայով լիմաբուրութիւններ է դուրս տալիս, նրան պէտք է պարզապէս մի կողմ քաշել եւ բացատրել (ցանկալի է՝ առանց առողջութեան կարճատեւ քայքայման հանգեցնող մեթոդների), որ դա անթոյլատրելի է: Ընդ որում՝ դա պէտք է անել հնարաւորինս անաղմուկ: Այս դէպքում աղմուկն առաջին հերթին ատրպէյճանցիներին է ձեռնաուել, եւ հենց նրանք են խոշորացոցով հետեւում հայկական մամուլին ու սոցիալքերին՝ այդ թեմայով «բլթոցներ» յայտնաբերելու եւ քարոզչական նպատակներով օգտագործելու համար:

Իսկ ինչ է տեղի ունենում մեզ մօտ: Թեման սրուեց յատկապէս Քոչարեանի դատաւարութեան համատեքստում, ընդ որում՝ նրանց համար, ովքեր ծանօթ էին Քոչարեանի անցած ուղու, միանգամայն սպասելի էր, որ նա անպայման շահարկելու է «հայաստանցի-ղարաբաղցի» թեման: Վերջին հաշուով, Քոչարեանը կեանքում ինչի հասել է՝ հասել է դարբաղեան խնդիրը շահարկելով, դա նրա

մշտական «կախարդական փայտիկն» է եղել: 1998-ին նա Հայաստանում պալատական յեղաշրջումը նախագահ է դարձել՝ այն ենթատեքստով, թէ «սրանք ուզում են ծախել Ղարաբաղը», 2008-ին արեան գնով ապահովել է իշխանութեան փոխանցումը Սերժ Սարգսեանին (եւ դրանով իսկ իր յետագայ ապահով կեանքը)՝ այն ենթատեքստով, թէ «սրանք ուզում են հասնել իշխանութեան, որ ծախեն Ղարաբաղը», ու հիմա էլ, բնականաբար, պիտի յայտնի դատաւարութիւնները ներկայացնի այնպէս, թէ «սրանք ուզում են նախկին գործերը բացալատելով թուլացնել մեզ, որ ծախեն Ղարաբաղը»: Մի խօսքով՝ Քոչարեանի այս պահուածքը սպասելի էր:

Միւս կողմից էլ՝ յեղափոխութեան աջակիցներից շատերն ակնյայտօրէն մինչեւ հիմա էլ լաւ չեն հասկացել, թէ ինչ է տեղի ունեցել Հայաստանում մէկ տարի առաջ, ու առանց երկար-բարակ մտածելու՝ ինչ ասես դուրս են տալիս (հաւանաբար յոյս ունենալով, որ դա իշխանութիւններին դուր կը գալ, եւ իրենց կը նկատեն): Նման բաները, ցաւօք, անխուսափելի են. վերջին հաշուով՝ յեղափոխութեանը գրեթէ ողջ ժողովուրդն է աջակցել, ու աջակիցների մէջ ինչ տեսակի մարդ ասես՝ կը լինի: Բայց վտանգը միայն այն չէ, որ ինչ-որ մէկը մի քանի հարիւր մարդու առջեւ անհեթեթութիւններ է դուրս տալիս, վտանգն այն է, որ հայաստանեան բազմաթիւ լրատուամիջոցներ ու քարոզչամիջոցներ մեծ ոգեւորութեամբ տիրաժաւորում ու օրեր շարունակ հասարակութեանն են մատուցում այդ անհեթեթութիւնները, այսինքն՝ ըստ էութեան վարուած են ճիշտ նոյն կերպ, ինչպէս ատրպէյճանական լրատ-

ումիջոցները: Ու գարմանալի «գուղադիպութեամբ»՝ դրանք ճիշտ այն նոյն լրատուամիջոցներն ու «նախաձեռնութիւններն» են, որոնք գրաւում են բացառապէս Ռոբերտ Քոչարեանին ու միւս նախկիններին պաշտպանելով (ենթադրաբար՝ ոչ առանց ենթական խրախուսման): Պարզ ասած՝ հենց Քոչարեանին ու միւս նախկիններին սատարող լրատուամիջոցներն են Հայաստանում աղմուկ բարձրացնում «հայաստանցի-ղարաբաղցի» դիսկուրսի շուրջ ու դրանում մեղադրում իշխանութիւններին: Ու այնպիսի տպաւորութիւն է ստեղծուում, կարծես «հայաստանցիների» միակ երազանքը օր առաջ «Ղարաբաղը ծախելն է», պարզապէս Քոչարեանը թոյլ չի տալիս:

Եւ սա՝ այն դէպքում, երբ Հայաստանն ու Արցախն ըստ էութեան միասնական օրգանիզմ են, ու Արցախին հասցուած ցանկացած հարուած հարուած է լինելու միասնական հայրենիքին (պատասխան հարուածն էլ միասնաբար ենք հասցնելու), եւ այս անառարկելի ճշմարտութիւնը որեւէ մէկը կասկածի տակ չի ընում: Բացի մի քանի անհամարժեքներից, ովքեր կամ ուղեղ չունեն, կամ դրա համար վարձատրուում են (հնարաւոր է՝ տարբեր ուժային բեւեռներից):

Յ.Գ. Բնութեան մէջ տարբեր կենդանիներ վտանգի դէպքում տարբեր ձեւերով են պաշտպանուում: Որոշ կենդանիներ փախում են, ուրիշները՝ թաքնում (նաեւ գոյնը փոխելով), կան նաեւ թուխաւոր կենդանիներ, բայց ամենատանձր սկոռնան է՝ վտանգի դէպքում գարձահատ է արձակում ու ապականում շրջապատը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՄՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՎԱԿԵԱՆ
ԿՈՄՍՎՅՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱԶՎՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Տնտեսական Զարգացումը Պետք է Յենուկ Անհատական Զանքի Կրայ». Փաշինեան



Սիւնիքի մարզի «Իմ քայլը յանուն» Սիւնիքի մարզի» մերթրունային պիզնես ծրագրերու համաժողովը

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը մեկնած է Սիւնիքի մարզի Տաթև համայնք՝ մասնակցելու «Իմ քայլը յանուն Սիւնիքի մարզի» ներդրումային պիզնես ծրագրերու համաժողովին:

Համաժողովի հիմնական նպատակը մարզերուն մէջ գործարար միջավայրի գարգացումն է:

«Մեր քաղաքական խնդիրն է Հայաստանը դարձնել մի այնպիսի երկիր, այնպիսի մարզական երկիր, ուր քաղաքական իրենց ուժերին եւ գիտեն, որ այդ գաղափարները կարելի է իրագործել Հայաստանի Հանրապետութիւնում: Եւ այն, ինչ տեղի ունեցաւ մէկ տարի առաջ Հայաստանում եւ ինչ շարունակում է տեղի ունենալ, ըստ էութեան, այս գաղափարի իրագործումն է», - իր ելույթին մէջ

ըսած է Փաշինեանը: Վարչապետը նշած է՝ Հայաստանի տնտեսական գարգացումը պէտք է յենուկ անհատական ջանքի վրայ:

«Տնտեսական գարգացումն առաջին հերթին յենում է հենց անհատների վրայ, ի հարկէ շատ կարեւոր են խոշոր ներդրողները, խոշոր ընկերութիւնների մուտքը Հայաստան, բայց իմ խորին համոզմամբ՝ այդ խոշոր ներդրողներն առաջին հերթին գնում են տաղանդաւոր մարզական յետեւից, եւ մեր խնդիրն է ցոյց տալ, որ Հայաստանում ապրում են տաղանդաւոր մարդիկ, որոնք կարող են ոչ միայն իրենց երազանքներն իրականացնել, այլեւ միջավայր ստեղծել ուրիշների երազանքների համար», - ըսած է Նիկոլ Փաշինեանը:

Ալէն Սիմոնեան. Կան Մարդիկ, Որոնք Կը Վճարուին, Որպէսզի Ընդդիմութեան Տեսիլք Ստեղծեն

«Բոլորը գիտեն, թէ ինչ միջոցներ են ծախսուում այսօր, որ պէտք կ'ընեն վարկաբեկեմն այս կամ այն պաշտօնային, այս կամ այն գործողութիւնը», - Մարտիրոսյանը յուշահամալիրին մէջ լրագրողներուն ըսած է Աժ փոխնախագահ Ալէն Սիմոնեանը:



Աժ փոխնախագահ Ալէն Սիմոնեան

«Եթէ խօսքը գնում է դաւաճողի պատերազմի մասին, մենք պէտք է հասկանանք, որ այսօր քաղաքական դաշտում գործում են երկու խումբ մարդիկ: Կան մարդիկ, ովքեր քաղաքական գործունէութեամբ են զբաղուում, եւ կան մարդիկ, որոնք վճարում են, որ պէտք է ընդդիմութեան տեսիլք ստեղծեն: Վճարում են այն մարդկանց կողմից, ովքեր այսօր անցնում են տարբեր քրէական գործերով կամ ամենայն հաւանականութեամբ ապագայում կ'անցնեն, որոնց անունները մենք շատ լաւ գիտենք: Ինչ վերաբերում է հողեր յանձնելուն, խօսքը գնում է այն մասին, որ այն մարդիկ, ովքեր այսօր չգիտեն ինչու հողեր յանձնելու մասին խօսքը շրջանառութեան մէջ են դնում, այդ մարդիկ են հենց բանակցել եւ այդ մարդկանց օրակարգում են եղել նման տարբերակները: Մենք պէտք է օրակարգ չենտենք այն բանը, որը ՀՀ իշխանութեան ներսում չկայ ու նոյնիսկ չի քննարկ-

Ալէի Լաւ է Ունենալ Ուշացած Անցումային Արդարադատութիւն, Քան՝ Զախողած

Ալէի լաւ է ունենալ ուշացած անցումային արդարադատութիւն, քան՝ ձախողած, «Ազատութեան» «Կիրակնօրեայ վերլուծական Հրայր Թամրազեանի հետ» հաղորդման ժամանակ ըսած է Ազգային ժողովի պետաիրաւական հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ, «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Վլատիմիր Վարդանեանը:

Հարցին, թէ բարեփոխումները անհրաժեշտ են, բայց ինչո՞ւ այսքան ուշ, «այնպիսի տպաւորութիւն է ստեղծուում, որ եթէ չլինէր դատաւոր Դաւիթ Գրիգորեանի՝ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանին կաշի քայտ արձակելու որոշումը, այս հարցը այսքան հրատապ չէր դառնայ», Վարդանեանը այսպէս պատասխանած է. - «Հաւատացնում եմ Ձեզ, որ անցումային արդարադատութեան գործիքակազմի ներդրման հետ կապուած Հայաստանի Հանրապետութիւնում լուծմանը նախատեսուած էին շատ ալէի վաղ, քան Ձեր կողմից մատնանշուած իրադարձութիւնների վրայ հասնելը, եւ ես չեմ մտածում, որ մենք այստեղ յապաղել ենք, որովհետեւ մօտեցումն այն ժամանակ էլ, այս պահին էլ հետեւ-

եալն է՝ ալէի լաւ է ունենալ ուշացած անցումային արդարադատութիւն, քան ձախողած անցումային արդարադատութիւն: Այս տեսանկիւնից չեմ կիսի Ձեր գնահատականը, որովհետեւ աշխատանքները տարւում էին: Անցումային արդարադատութեան հետ կապուած լուծումները մենք մօտաւորապէս ամիս, ամիսուկէս առաջ նախաձեռնեցինք Ազգային ժողովում, յատկեցրեցինք ձեւաչափը, հրաւիրեցինք մասնակցելու հասարակական տարբեր կազմակերպութեան ներկայացուցիչներին, քաղաքասարակութեան հիմնարկներին, հրաւիրեցինք իր ուղղուած նաեւ դատական իշխանութեան ներկայացուցիչներին, նրանք ներկայ էին նաեւ լուծումներին, բաւակաշին աշխույժ, եւ սա մի գործընթաց է, որը որեւէ ինչու կարելի կ'այլ իրադարձութեան հետ, պատճառահետեւանքային կապ ունիսկ եթէ կայ, դա պատահական է»:

Ազգային ժողովի պետաիրաւական հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ խօսքով՝ անկախ դատական իշխանութիւն ունենալու համար շատ մեծ ջանքեր ներդնել պէտք է:

Հրաժարական Ներկայացուցած է ԵՊՀ Տնօրէն Արամ Սիմոնեանը

Երեւանի պետական համալսարանի երկարամեայ տնօրէն Արամ Սիմոնեանը գիտական խորհուրդի նիստի ժամանակ հրաժարական տուած է՝ յայտարարելով, որ համալսարանի շուրջ ստեղծուած լարուածութիւնը ալէի գորացած է, ինչին համար մեղադրած է կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը:

Գիտական խորհուրդի նիստի ժամանակ Սիմոնեանը յայտարարած էր «Այն լարուածութեան մեղաւորը, որը կայ համալսարանի շուրջ եւ գնալով ուժեղանում է, ես չեմ եւ ոչ էլ համալսարանն է: Դրա մեղաւորը բարձրագոյն կրթութեան

եւ գիտութեան ոլորտում քաղաքականութիւն իրականացնող մարմնի ներկայացուցիչներն են»: Այն նաեւ աւելցուցած է. - «Ես արդէն տեղեակ եմ՝ փոխելու են Հոգաբարձուների խորհրդի ամբողջ կազմը, որ կարողանան ինձ հանելու հաճոյքը ստանալ: Ես այդ հաճոյքը նրանց չեմ պատճառի»:

2006 թուականէն Հայաստանի ամենամեծ բուհը ղեկավարած Սիմոնեանը իր հրաժարականի ելույթի պատկառելի մասը նուիրած է համալսարանի հարիւրամեակի կապակցութեամբ պաշտօնական ոչ մէկ ուղերձ ու շնորհակարանք չստանալու հանգամանքին:

Գագիկ Յարութիւնեանը Հրաժարական Տուաւ Բարձրագոյն Դատական Խորհուրդի Նախագահի Պաշտօնէն

Բարձրագոյն դատական խորհուրդի (ԲԴԽ) նախագահ Գագիկ Յարութիւնեանը հրաժարականի դիմում ներկայացուցած է:

«Բարձրագոյն դատական խորհրդի յարգարժան անդամներ, նկատի ունենալով դատական իշխանութեան եւ դատաւորների առնչութեամբ ընթացող գարգացումները եւ այդ առիթով մայիսի 20-ին մամուլով իմ կողմից արտայայտած մտահոգութիւնները՝ այլեւս նպատակայարմար չեմ համարում իմ յետագայ աշխատանքը Բարձրագոյն դատական խորհրդի նախագահի եւ խորհրդի անդամի կարգավիճակներում», - իր դիմումին մէջ գրած է Յարութիւնեանը՝ խնդրելով իր լիազօրութիւնները այսօրուրէն համարել դադարած:

«Ձեզ մաղթում եմ յետագայ բեղմնաւոր գործունէութիւն՝ իրաւական պետութեանը պատշաճող անկախ դատական իշխանութեան կայացման գործում», - ըսուած է Գագիկ Յարութիւնեանի դիմումին մէջ:

Այնպէս խոստացած է Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի հայրենա-




ԲԴԽ Նախագահ Գագիկ Յարութիւնեան

կիցներուն «տարիներով կուտակուած» ասելիքը ներկայացնել յարողով:

«Վստահ եմ, որ այսուհետ բաւարար ժամանակ կ'ունենամ՝ յատկապէս միջազգային մասնագիտական գործակցութեան շրջանակներում առաւել աշխույժ գործունէութիւն ծաւալելու համար՝ ի բարօրութիւն հայ ժողովրդի: Աստուած պահանջման մեր երկրին ու ժողովրդին», - գրած է Գագիկ Յարութիւնեանը:

ԼՈՒՐԵՐ

Չինաստանի Արտաքին գործոց նախարարը Հանդիպած է Հայաստանի Ղեկավարութեան Հետ



Հայաստանի արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեան եւ Չինաստանի իր պաշտօնակից՝ Վան Ին

Վերջին շրջանին Հայաստանի եւ Չինաստանի միջեւ յաճախակի դարձած բարձրաստիճան պաշտօնական փոխալսուցները, հանդիպումները կը վկայեն երկկողմ յարաբերութիւններու դրական զարգացման մասին, ինչին հայ հասարակութիւնը շատ լաւ կը վերաբերի: Այդ մասին յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ ընդունելով Չինաստանի Պետական խորհուրդի անդամ, արտաքին գործոց նախարար Վան Ինը:

Փաշինեանը նշած է, որ վերջերս Չինաստան կատարած այցի ծիրէն ներս շատ արդիւնաւէտ հանդիպումներ ունեցած է երկրի նախագահի, վարչապետի, գործարարներու հետ եւ ուրախ է, որ քննարկումներու արդիւնքներով ձեռք բերուած են յստակ պայմանաւորութեան թիւեր՝ փոխշահաւէտ համագործակցութիւնը զարգացնելու ուղղութեամբ:

Կառավարութեան ղեկավարը կարեւորած է Երեւանի մէջ Հայաստանի եւ Չինաստանի արտաքին գործոց նախարարներու կողմէ «ՀՀ կառավարութեան եւ Չինաստանի կառավարութեան միջեւ սովորական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտօնագրի պահանջի փոխադարձաբար վերացման մասին» համաձայնագրի ստորագրումը, որ կը նպաստէ ոչ միայն մարդասիրական, այլեւ գործարար կապերու զարգացման եւ ներդրումներու ներգրաւման: Այս ծիրէն ներս վարչապետը առաջարկած է համատեղ քննարկել նաեւ օդային ուղիով հաղորդակցութեան հաստատման հեռանկարները:

Չինաստանի Արտաքին գործոց նախարարի խօսքով՝ իր երկիրը կը կարեւորէ երկխօսութեան ամրապնդումը, փոխշահաւէտ գործակցութեան զարգացումը, եւ Փեքինի մէջ Հայաստանի վարչապետի հանդիպումները, ձեռք բերուած պայմանաւորութեան թիւերը եւս մէկ անգամ ընդգծեցին հայ-չինական յարաբերութիւններու, անոնց շարունակական ընդլայնմանն ու սերտացման երկուստեք տրուող կարեւորութիւնը: «Պատրաստ ենք եւ տրամադրուած ենք խորացնել փոխշահաւէտ գործակցութիւնը Հայաստանի հետ՝ Ձեր ղեկավարութեամբ», - ըսած է նախարարը:

Նիկոլ Փաշինեանը երախտագրութիւն յայտնած է Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան հարցի վերաբերեալ Չինաստանի հաւասարակշռուած դիրքորոշման համար: Չինաստանի արտաքին գործոց նախարարի գլխաւորած պատուիրակութիւնը ընդունած է նաեւ նախագահ Արմէն Սարգսեանը:

Նիկոլ Փաշինեանը երախտագրութիւն յայտնած է Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան հարցի վերաբերեալ Չինաստանի հաւասարակշռուած դիրքորոշման համար: Չինաստանի արտաքին գործոց նախարարի գլխաւորած պատուիրակութիւնը ընդունած է նաեւ նախագահ Արմէն Սարգսեանը:

Երեւանի «Գրիգոր Լուսաւորիչ» Փողոցը Պիտի Անուանափոխուի եւ Կոչուի՝ «Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Փողոց»


Երեւան քաղաքի Կեդրոն վարչական շրջանի «Գրիգոր Լուսաւորիչ» փողոցը պիտի անուանափոխուի «Սուրբ Գրիգոր Լուսաւորչի»: «Արմէնքերես»-ի հաղորդմամբ՝ Երեւանի աւագանին ձայներու 30 կողմ, 7 դէմ եւ 12 ձեռնպահ համամասնութեամբ կողմ քուէարկած է աւագանիի «Լոյս» խմբակցութեան անդամ Թեհմինա Վարդանեանի կողմէ առաջարկուած նախագիծին:



«Սուրբ» անականը, ինչը անհրաժեշտ է շտկել, հաշուի առնելով այն հանգամանքը, որ հայ ազգը առաջինն է, որ քրիստոնէութիւնը ընդունած է որպէս պետական կրօն: Նոյն նիստի ժամանակ Երեւանի աւագանին բուռն քննարկումներ է ետք մերժած է Մովսէս Խորենացի փողոցի եւ Մաշտոցի պողոտայի անուններուն առջեւ «Սուրբ» բառը աւելցնելու առաջարկը:

Գրիգոր Լուսաւորիչը հայ եկեղեցուց հոգեւոր Հայրերու կողմէ դասուած է աւագ սուրբերու կարգին, այնուհետեւ դասուած համաքրիստոնէական սուրբերու շարքին: Նախագիծին մէջ նշուած է, որ Գրիգոր Լուսաւորիչի անուամբ կոչուած փողոցը ներկայիս չընդգրկեր

«ՀԱՊԿ-ը Հայաստանի Անվտանգութեան Համակարգի Կարեւորագոյն Տարրերէն Մէկն է». Փաշինեան Ընդունած է Զասը



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան կ'ընդունի Սթանիսլաւ Զասին

Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղարի թեկնածու, Պելաուսիայի Անվտանգութեան խորհուրդի պետական քարտուղար Սթանիսլաւ Զասը ընդունած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Վարչապետը կարեւորած է ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի թեկնածուութեան հարցի վերաբերեալ կազմակերպութեան անդամ երկիրներու միջեւ համաձայնութեան գալու փաստը: «Ուրախալի է, որ համաձայնութեան եկանք, որ 2020 թուականի Յունուարի 1-ից ուտացիոն սկզբունքով Դուք կը ստանձնէք ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնը:

ՀԱՊԿ-ը հանդիսանում է ՀՀ անվտանգութեան համակարգի կարեւորագոյն տարրերից մէկը, եւ

Հայաստանը շահագրգռուած է այդ կառուցի արդիւնաւէտ աշխատանքում: ՀԱՊԿ գործունէութիւնը մեր տարածաշրջանում պէտք է նպաստի հաւասարակշռութեան եւ խաղաղութեան պահպանմանը», - նշած է Նիկոլ Փաշինեանը:

ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնը թափուր մնացած էր Հայաստանի ներկայացուցիչ Եուրի Խաչատուրովի ետ կանչումէն ետք: Անոր նկատմամբ մեղադրանք առաջադրուած էր «Մարտի 1»-ի գործով սահմանադրական կարգը տապալելու համար: Յիշեցնենք, որ աւելի վաղ Հայաստանը համաձայնութեան չէր գար ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի պաշտօնին Պելաուսիայի թեկնածուի հարցի շուրջ: Պաշտօնական Երեւանը նպատակաշարժար չէր գտած աւելի վաղ անոր ընդունելի Հայաստանի մէջ:

Տարուան Առաջին Եռամսեակին Հայաստանի Տնտեսական Աճը Կազմած է 7,1 Տոկոս

Առնուազն 62 միլիառ դրամով կը գերակատարուի այս տարուան պիւտճէի եկամտային մասը, յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ իր մօտ պետական կառավարման մարմիններու ղեկավարներու մասնակցութեամբ տեղի ունեցած խորհրդակցութեան ժամանակ:

«Մենք ինդիք ունենք քննարկելու, թէ ինչպէս պէտք է տեղաբաշխել այդ յաւելեալ պիւտճէի միջոցները: Ըստ էութեան, մենք արդէն երեք հարցի վերաբերեալ որոշում կայացրել ենք: Այդ գումարներից յաւելեալ 7 միլիառ դրամ կը տրամադրուի ճանապարհաշինութեան ծրագրին: Մենք պայմանաւորուել ենք, որ գինուրականների աշխատավարձերը Յու-

լիսի 1-ից կ'աւելանան, եւ այդ նպատակին կէս տարուայ համար կը տրամադրուի 6,8 միլիառ դրամ, ուսուցիչների աշխատավարձերը պէտք է բարձրացնենք եւ դրա համար այս տարի անհրաժեշտ կը լինի 3,5 միլիառ դրամ: Մենք պէտք է մնացած միջոցների մասով կայացնենք որոշումներ: Խօսքը մօտաւորապէս 45 միլիառ դրամի մասին է, որի շուրջ պէտք է ճիշդ որոշում կայացնենք, թէ ինչպէս ծախսել այդ գումարը», - ըստ վարչապետի պաշտօնական կայքէջի, ըսած է Փաշինեանը:

Վարչապետը նշած է, որ այս տարուան առաջին եռամսեակի տուեալներով՝ կայ համախառն ներքին արդիւնքի 7,1 տոկոս աճ:

Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարը Փախուստի Դիմած է Առաջնագիծէն

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանովը վերջերս փախուստի դիմած է առաջնագիծէն, քանի որ յայտնուած էր հայ դիրքապահներու վերահսկողութեան ներքոյ՝ կառավարութեան նիստին ետք լրագրողներու հետ ձեպագրոցի ընթացքին յայտարարած է Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը:

Թեան պաշտպանութեան նախարարին կը դիմաւորի Երեւանում կամ այլ տեղ: Իրականում նա, այս վերջերս առաջին գիծ գալով, փախուստի էր դիմել մեր գինուած ուժերի կողմից վերահսկողութեան տակ վերցուելուց յետոյ», - նշած է Գրիգորեանը: - «Այց է ունեցել սահման, որից յետոյ փախուստի է դիմել, որովհետեւ յայտնուել էր մեր գինուորների վերահսկողութեան տակ», - մանրամասնած է Անվտանգութեան խորհուրդի քարտուղարը:

Հայկական «Ադամեան» Ապրանքանիշի Հեռուստացույցները Պատրաստ են Ներկայանալ Սպառողին



Հայկական «Ադամեան» ապրանքանիշի հեռուստացույցներու առաջին խմբաքանակն արդէն պատրաստ է, այն հաշուած օրերու ընթացքին կը ներկայանայ սպառողներուն: «Արմէնպրէս»-ի փոխանցմամբ՝ այս մասին Մայիսի 23-ին Արմաւիրի մարզի Մերձաւան գիւղին մէջ գտնուող գործարանին մէջ լրագրողներու հետ զրոյցին ըսաւ «Ինթերնէշնլ մանուֆաքչըրինգ գրուպ» ՓԲԸ տնօրէն Ռամի ճուտին:

«Այժմ օրական կը հաւաքենք մօտ 100-150 հատ հեռուստացույց: Մօտ օրերս ատոնք կընք գտնել ՀՀ ողջ տարածքին մէջ գործող խոշոր մասնագիտացուած խանութ արահներու մէջ», - ըսաւ Ռամի ճուտին:

Ընկերութեան տնօրէնը նշեց, որ թէեւ գործարանի բացումը տեղի ունեցած էր 2018թ. Դեկտեմբեր 5-ին, իրենք արտադրութիւնը կընցած են սկսիլ միայն Մայիսին, քանի որ կը սպասէին կառավարութեան կողմէ ներմուծման մաքսային արտօնութեան տրամադրման:

«Մենք կը սպասէինք կառավարութեան կողմէ մաքսային արտօնութեան տրամադրման, որովհետեւ այն գինը, որ մենք խոստացած էինք վաճառքի համար, չէինք կրնար սահմանել, եթէ նաեւ մաքսային տուրք վճարէինք: Արտօնութիւնը կառավարութիւնը մեզի տրամադրեց ապրիլին», - նշեց տնօրէնը:

«Ինթերնէշնլ մանուֆաքչըրինգ գրուպ» ՓԲԸ-ի հնգամեայ ներդրումային ծրագիրը բաղկացած է 3 փուլի: Այժմ գործարանին մէջ հեռուստացույցներու արտադրութեան համար անհրաժեշտ սարքաւորումները կը ներկրուին, որմէ յետոյ ատոնք կը հաւաքուին Հայաստանի մէջ: Մէկ ու կէս ամիս անց ընկերութիւնը կը ծրագրէ գործարկել նաեւ երկրորդ հոսքը, որուն արդիւնքով կը սահմանուի 2000 օդորակիչ եւ 3000 հեռուստա-

ցույց: Երկրորդ հոսքի գործարկման հետեւանքով ընկերութեան մէջ կը ստեղծուի եւս 30 աշխատատեղ: Հայկական արտադրութեան լուսցքի մեքենաները, սառնարանները եւ օդորակիչները սպառողին կը ներկայանան «ԱՅՈ» (AIO) ապրանքանիշի ներքոյ:

«Ծրագրի առաջին փուլը պիտի տեւէ 2 տարի: Երկրորդ փուլին մէջ կենցաղային սարքաւորումներու արտադրութեան համար անհրաժեշտ մօտ 20% բաղկացուցիչ ու համալրող մասերու արտադրութիւնն ու վերջնական կենցաղային սարքաւորումներու հաւաքումը պիտի իրականացուի այստեղ, 80% բաղկացուցիչ մասերը պիտի ներմուծուին: Այս փուլին սկսած կենցաղային սարքաւորումներու ծրագրային ապահովման բոլոր աշխատանքները նոյնպէս կ'իրականացուին ՀՀ-ի մէջ: Փուլի տեւողութիւնը եւս 2 տարի է: Երրորդ փուլին մէջ կենցաղային սարքաւորումներու արտադրութեան համար անհրաժեշտ մօտ 60% բաղկացուցիչ ու համալրող մասերու արտադրութիւնն ու վերջնական կենցաղային սարքաւորումներու հաւաքումն արդէն կ'իրականացուի Հայաստանի մէջ, իսկ բաղկացուցիչ մասերու 40%-ը կը ներմուծուի: Այս փուլի տեւողութիւնը 1 տարի է», - ըսաւ ճուտին:

«Ինթերնէշնլ մանուֆաքչըրինգ գրուպ» ՓԲԸ հասարակայնութեան հետ կապերու պատասխանատու Քնարիկ Առաքելեան մեզի հետ զրոյցին նշեց, որ ընկերութիւնը կը պատրաստուի նաեւ արտահանել հայկական կենցաղային տեխնիկան, սակայն այդ հարցով կ'ակնկալեն նաեւ ՀՀ կառավարութեան աջակցութիւնը:

«Ինթերնէշնլ մանուֆաքչըրինգ գրուպ» ՓԲԸ-ն հայ-լիբանանեան սուրիական համատեղ ներդրումային ծրագիր է:

Հայաստանի Սէջ Նշուեցան

Շարունակուած էջ 1-էն
ձեռք բերեց այն, ինչ թուում է՝ կորցրել էր անդառնալիօրէն, ձեռք բերեց պետականութիւն, ձեռք բերեց պետական դրօշ, ձեռք բերեց պետական գինանշան, ձեռք բերեց պետական օրհներգ, որն արտայայտում էր մահուան եզրին հասած մեր ժողովրդի պատմական վերածնունդի ողբերգական, բայց միեւնոյն ժամանակ հրաշափառ պատմութիւնը»:
Այնուհետեւ վարչապետը մի-

ջոցառման մասնակիցներուն հետ Մարդարապատի յուշահամալիրի Հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան ազգային թանգարանին մէջ դիտած է «Հայաստանի Առաջին Հանրապետութեան կազմաւորումը եւ մայիսեան հերոսամարտերուն պատմութիւնը» խորագրով ցուցահանդէսը:
Երեւանի եւ Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ տեղի ունեցան տօնական այլազան միջոցառումներ:

Երտողանի Վերջին Հակահայ Ատելութեան Ելոյթը Քննարկուած է Հոլանտայի Խորհրդարանէն Ներս

Հոլանտահայ կազմակերպութիւններու ֆեդերացիան (FAON) անդունելի համարած է Հոլանտայի Արտաքին գործոց նախարար Սթէֆ Պլոքի պատասխանը Հոլանտայի խորհրդարանի պատգամաւորներու կողմէ՝ դատապարտելու Հայոց ցեղասպանութեան մասին Թուրքիոյ նախագահ Էրտողանի անհեթեթ խօսքերը, որ ան արտայայտած է 24 Ապրիլ 2019-ին՝ Մեծ Եղեռնի գոհերու յիշատակի օրը:



2019 թուականի 15 Մայիսին խորհրդարանէն ներս տեղի ունեցած Թուրքիոյ իրավիճակի մասին քննարկումներու ժամանակ, տարբեր խմբակցութիւններու պատգամաւորները դիմած են արտաքին գործոց նախարարին կոչ ընելով՝ դատապարտելու Թուրքիոյ անթոյլատրելի ժխտողական քաղաքականութիւնը, որու դրսեւորումն է Թուրքիոյ նախագահ Էրտողանի խօսքերը թէ «հայ հրոսակախմբերու եւ անոնց աջակիցներու վերաբնակեցումը, որոնք կը կոտորէին իսլամ ժողովուրդը, ամենաողջամիտ գործողութիւնն էր, որ կարելի էր նախաձեռնել այդ ժամանակ» իր ելոյթին մէջ պատգամաւոր ձեռնարկող (Քրիստոնէական միութիւն □ CU) յիշեցուցած է Ռաուվութի բանաձեւի մասին, որ դեռ ուժի մէջ է, ուր խորհրդարանը միաձայն յանձնարարած է կառավարութեան Թուրքիոյ հետ երկխօսութեան շրջանակէն ներս շարունակաբար եւ բացայայտօրէն օրակարգի մէջ ներառել Հայոց ցեղասպանութեան ճանաչումը:
2004 թուականին Հոլանտայի խորհրդարանի կողմէն միաձայն ընդունուած այս բանաձեւը կը համարուի խորհրդարանի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման առաջին փաստաթուղթը: Այս բանաձեւի դրոյթները բազմիցս մէջբերուած են խորհրդարանէն

ներս, երբ քննարկուած է մարդու իրաւունքներու իրավիճակը Թուրքիոյ մէջ ընդհանրապէս եւ Հայոց ցեղասպանութեան ժխտումը մասնաւորապէս:

Պատգամաւորներ Մարթէյն վան Հելվերթը (Քրիստոնէայ դեմոկրատական կոչ-CDA) եւ Քեես վան Տեր Սթայը (Քաղաքական Բարեփոխուած կուսակցութիւն - SGP) նոյնպէս անդրադարձած են այս հարցին եւ անհրաժեշտ համարած են հոլանտական կողմի հակադարձ պատասխանը Թուրքիոյ նախագահի յայտարարութիւններուն:

Նախարար Պլոքը խոսափած է, իր խօսքով, «Հայոց ցեղասպանութեան խնդրին» առնչուող այդ հրատապ հարցերուն ուղղակի պատասխան տալէ, նշելով, որ ան սովորաբար չի ցանկար արձագանքել տարբեր մարդոց հնչեցուցած խօսքերուն:

Հոլանտահայ կազմակերպութիւններու ֆեդերացիան (FAON) կը գտնէ, որ նախարարի այս արձագանքը կը վկայէ ծայրայեղ եւ վտանգաւոր քաղաքական անակցբուն քայնութեան մասին: Քննարկումներու ժամանակ նախարարը ստիպուած եղած է քանի մը անգամ հաշիւ տալ ոչ միայն Թուրքիոյ հետ չարաբերութիւնները վերականգնելու, այլեւ ընդլայնելու միջոցներու մասին, ինչպէս նաեւ հոլանտացիներու միամիտ յոյսի մասին, որ առեւտրային չարաբերութիւններու զարգացմամբ հարաւոր կ'ըլլայ Թուրքիոյ մէջ բարելաւել օրինակաւորութիւնը:

Հայկական, Յունական Եւ Կաթոլիկ

Շարունակուած էջ 1-էն
կանացուի 2 փուլով՝ ներկայ վիճակի գնահատում, ապա վերականգնում: Ուսումնասիրութիւնները պիտի իրականացուի 2 իտալական ակադեմիական ու գիտական հիմնարկներու կողմէ եւ աշխատանք-

ներն ալ պիտի կատարուին 3 համայնքներու համատեղ յանձնաժողովի հսկողութեամբ:
«Մենք կ'աղօթենք Աստուծոյ՝ օրհնել այս նախաձեռնութիւնն ու պսակել այս նախագիծը յաջողութեամբ», - ըսուած է անոնց տարածած համատեղ յայտարարութեան մէջ:

Կարօ Փայլանի Ահազանգը

Շարունակուած էջ 1-էն
Վերջերս այդ ֆիլմաշարին միջոցով գրեթէ սպառնալիքի հասնող ուղերձներ հնչած են Թուրքիոյ նախկին նախագահ Ապտուլլահ Կիլիլի եւ նախկին վարչապետ Ահմեթ Տաւութօղլուի հասցէին:
Եւ ահա նոյն այդ ֆիլմաշարին մէջ հայ անգամ թիրախաւորած են այսու կերպարը: Կարօ Փայլանը պատմած է, որ այդտեղ հայու կերպարը ներկայացուած է

իբրեւ ստոր, դաւաճան մէկը: Իսկ ամենահետաքրքիրը այն է, որ անոր անունը կարօ է: Բնականաբար, ոչ պատահական:
Հայ պատգամաւորը յիշեցուցած է, որ օսմանեան բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաներ հայեր եղած են: Հայ եղած է նաեւ Ապտուլլահմիտի հարազատ մայրը: Իսկ այդ մասին ֆիլմաշարին մէջ ոչինչ կ'ըսուի: Հայը կը ներկայացուի միայն դաւաճանի կերպարով, անունն ալ՝ կարօ:

«Լրջացէ՛ք»

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Ի տես անցնող մի քանի օրերուն Հայաստանի մէջ արձանագրուող զարգացումներուն, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթեւեան եւ նոյն մարմնի անդամ Արթուր Խաչատրեան յայտարարեցին՝ «Մեր հիմնական կոչն է. լրջացէ՛ք»: Իրենց այս կոչը մեզ մղեց խորհրդածութեանց, որոնք կը ներկայացնենք այս յօդուածով:

Լուրջ կամ լրջութիւն բառը խորունկ իմաստ ունի: Ան իր մէջ կը պարփակէ զգօնութիւն, սթափութիւն, արթնութիւն, զգաստութիւն, ծանրախոհութիւն, խոհեմութիւն, պարկեշտութիւն եւ նման կարեւոր նշանակութիւն ունեցող իմաստներ: Հետեւաբար, այս բոլորը նկատի առած, եկէք փորձենք լրջօրէն քննարկել իրավիճակը:

Անժխտելի իրականութիւնն է, որ 2018-ի Թաւշեայ յեղափոխութիւնը նոր շունչ, լաւատեսութիւն, խանդավառութիւն եւ յոյս բերաւ մեր ժողովուրդին, հայրենիքի թէ սփիւռքի տարածքին: Միայն փակ ուղեղով եւ քարացած մտայնութեամբ մարդիկ անկարող են տեսնելու այս իրողութիւնը, որովհետեւ կոչը մարդն իսկ զգացմունքներով «տեսաւ» այն: Ու ի տես այս զարգացման, ամէն ողջմիտ հայի համար բնական պէտք է դառնայ ամէն գնով նախանձախնդիր ըլլալ այս նոր իրավիճակի ամրակայման ու բարգաւաճման:

Թաւշեայ յեղափոխութիւնը նաեւ փաստեց նախորդ իշխանութեանց վարած քաղաքականութեան անանկութիւնը: Երկրի ազգաբնակչութեան մտահոգիչ նուազումը, արդար իրաւակարգի մը բացակայութիւնը, փոքրաթիւ անհատներու ահաւոր հարստացումը, ժողովուրդի լայն խաւերու աղքատացումը, պետութեան արտաքին պարտքի ահաւոր կուտակումը, երկրի ընդերքի անխնայ թալանը, մի քանի օրինակներ են միայն այդ անանկ ու կործանիչ քաղաքականութեան: Հետեւաբար, որեւէ փորձ վերականգնանացնելու նախորդը, ահաւոր ժխտական հետեւանքներ պիտի ունենայ ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ սփիւռքահայութեան ապագային համար: Ուրեմն, բոլորս պէտք է ջանանք կանխատեսել այդպիսի փորձերու հաւանականութիւնները եւ կանխարգիլել գանոնք:

Նախկին իշխանութիւններէն կը սպասենք եւ արդեն իսկ տեսած ենք, որ անոնք իրենց անձնական ու հատուածական շահերուն համար երբէք չեն վարանած ոտնակոխ ընելու մեր ազգային շահերը: Վկայ՝ Հոկտեմբեր 27-ն ու Մարտի 1-ը. վկայ՝ կեղծուած ընտրութիւններն ու «ընտրուածները» փշալարերով ու թիկնապահներով ժողովուրդէն հեռու պահելու վախը. վկայ՝ Հայաստանի ռազմավարական արժէք ներկայացնող հաստատութեանց «գոյք պարտքի դիմաց» ծախուիլն ու Հայաստանի ընթերքի թալանը: Հետեւաբար, լրջանալու կոչը շատ հրատապ ու անհրաժեշտ է եւ այդ կոչին առաջինը պէտք է անսան նախկին իշխանութեանց ներկայացուցիչները, մէջն ըլլալով կոչը հնչեցնողները: Ժողովուրդը չէ մոռցած, որ ինքզինք Հայաստանի «միակ տղամարդը» համարողին հլու հնազանդ ծառայողները այսօր ժողովրդավարութիւնէ կը քարո-

զեն: Ժողովուրդը չէ մոռցած, որ քսան տարի Հայաստանի պետականութեան հիմքերը փորողները այսօր կ'այլաձայնեն մէկ տարուան կեանք չունեցող իշխանութիւնը, որ չէ բարելաւած իրավիճակը: Ժողովուրդը չէ մոռցած, որ ազնուութիւնն չէ Արցախի Հանրապետութիւնը չճանչնալուն համար դաւաճան համարել Հայաստանի այն իշխանութիւնը, որուն մասնակից չեն եւ ապա քսան տարի լուել այդ մասին, երբ իշխանութեան մասնակից են: Ժողովուրդը չէ մոռցած, որ ազնուութիւնն չէ քսան տարի քաղաքական մենիշխանութեան մաս կազմել եւ իշխանութիւնը կորսնցնելէ ետք այլանկի գտնել այդ վարչաձեւը: Ժողովուրդը չէ մոռցած, որ ազնուութիւնն չէ մասնակից դառնալ պետական հաստատութիւններու հարստահարման եւ դուրս քայլէ ետք քննադատել այդ վարքը: Ժողովուրդը չէ մոռցած, որ երկիրը արկածախնդրութիւններէ գերծ պահելու կոչեր արձակողները ինչպիսի դեր ունեցան սպանութիւններու եւ այլ դաւերութիւններու մէջ: Ժողովուրդը

չէ մոռցած, որ Հոկտեմբեր 27-ի սպանդը կատարած Նաչիբի Յունանեանը, իր արարքէն անմիջապէս ետք հեռախօսային կապ հաստատած է Հրանտ Մարգարեանի հետ, իմանալու համար թէ ե՞րբ պիտի հասնի խոստացուած օգնութիւնը:

Մենք հաւատացողն ենք մեր ժողովուրդի զգօնութեան եւ անշահախնդիր հայրենասիրութեան: Մեր ազգի գլխուն եկած դժբախտութեանց պատճառները պէտք է փնտռել իրենց անհատական կամ հատուածական մասնակի շահերը մեր ազգային ընդհանուր շահերէն վեր դասող եւ կամ այդ շահերը իրենց մենաշնորհ համարող մարդոց թիւը մտայնութեանց մէջ: Հետեւաբար, ջանք պէտք է խնայենք մերկացնելու այդ թիւը մտայնութիւնները, յօգուտ ազգային առողջ մտայնութեան զարգացման:

Ճիշտ այդ նպատակին կը ծառայէր «Մասիս»-ի 3 Յունուար 2009-ի թիւով հրատարակուած մեր «Իշխանափոխութիւն՝ Մտայնափոխութեամբ» յօդուածը, ուր կը կարեւորէինք մտաւարականութեան դերը՝ «Բարելաւելու ժողովուրդի մտածելակերպը եւ գոյացնելու իրաւունքներուն գիտակից քաղա-

քացիական արթուն հասարակութիւն», ինչպէս նաեւ «Ժողովուրդի ուժաւորումով նպաստելու երկրի ու պետականութեան հզօրացման»:

Ճիշտ այդ նպատակին կը ծառայէր նաեւ «Մասիս»-ի 10 Յունուար 2004-ի թիւով հրատարակուած մեր «Ժողովուրդի Քայլը» յօդուածը, ուր կը նշէինք. «Աշխարհի վրայ չկայ աւելի հզօր ուժ, քան համոզումով ու հաւատով գինուած ժողովուրդ մը, որ կը քայլէ իր իտէպլները մարմնաւորող առաջնորդի մը ղեկավարութեամբ: Անոր երթը յաղթական է ու չկայ արգելք, որ չկրնար յաղթահարել: ...Ինչպիսի ժողովուրդ մըն ենք մենք այսօր եւ դէպի ո՞ւր կ'երթանք: Ունի՞նք արդեօք նոյն ճակատագիրը դիմագրաւող մէկ ազգի զաւակներ ըլլալու գիտակցութիւնը»: Մեր յօդուածը կը վերջացնէինք հետեւեալ հաստատումով. «Մեր հարցումին պատասխանը ժողովուրդը պիտի տայ իր առնելիք քայլերով»: Հարկ եղաւ սպասել 14 տարի, մինչեւ որ ժողովուրդը քայլ առաւ, առաջնորդութեամբ Նիկոլ Փաշինեանի եւ

Շար.ը էջ 18

COMEDY NIGHT

Կազմակերպութեամբ՝
 «Մ.Մ.-ի Տիկնանց Վարչութեան
 ի նպաստ»
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ԾԻԾԱՂԻ ԵՐԵԿՈՅ

Երեկոն կը խանդավառէ՝
ՅԱՐՈՒԹ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ
 «Խրաքար՝ Տաղանդատու երգիչ
ԱՐԹԻԻՐ "MISTER X"

Տեղի կ'ունենայ
ՇԱԲԱԹ, 1 ՅՈՒՆԻՍ, 2019
 Երեկոյեան ժամը 8:30-են սկսեալ
 «ԿԲՄ-ի Կեդրոն»՝ 1060 N. Allen Ave., Pasadena, California

Տոմսերը ապահովելու համար դիմել
 Կարինէին (626) 755-4773

Մուտք \$60 Նեաղաքայ ընթրիք

Թուրքիոյ Սէջ Իսլամացած Զայերը

Գ. ՄՈՒՆՅԵԱՆ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի «Զուարթնոց» Մշակութային Մարմնի եւ Պոլսահայ Միութեան կազմակերպութեամբ, Մայիս 21ին, 2019, երեկոյեան ժամը 8:00ին, առաջնորդարանի Գալաճեան սրահին մէջ տեղի ունեցաւ շահեկան նախաձեռնութիւն մը Թուրքիոյ մէջ իսլամացած հայերու մասին:

Թեմիս բարեջան առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հովանաւորութիւնը վայելող սոյն ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերած էին Հ.Բ.Լ.Մ.ը, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը, Թէքէնան, Պոլսահայ, Իրանահայ, Իրաքահայ եւ Համագրային միութիւններն ու Ապրիլ գրատունը:

Կազմակերպիչ յանձնախումբի անունով ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Զուարթնոց Մշակութային Մարմնի ատենապետ Տոքթ. Սիմոն Սիմոնեան: Ան հակիրճ կերպով բնութագրեց թէ ինչպէս հայոց ցեղասպանութեան զոհ դացած մէկ ու կէս միլիոն հայերու կողքին կային նաեւ Չարդէն մագապուրծ ազատած հայեր, որոնք դաժան պայմաններու բերումով, հարկադրուած էին իսլամանալ եւ որոնց շառաւիղներուն թիւը ներկայիս պատկառելի թիւ մը կը կազմէ:

Այնուհետեւ խօսք առաւ նախկին պոլսահայ եւ ներկայիս քանատահայ ծանօթ ազգայիններէն դաշնակահար, մանկավարժ եւ հրապարակագիր Ռաֆֆի Պետրոսեան: Յարգելի գեղուցաբերը իր ելոյթին մէջ հպանցիկ ակնարկով անդրադարձաւ 104 տարիներ առաջ աստուծոյ ջարդի եւ բռնագողթի ենթարկուած, թրքական եաթաղանի հայ զոհերու ինչպէս նաեւ իսլամացած թաքուն եւ ծպտեալ հայերու մասին: Ըստ իրեն ծպտեալ հայերու շառաւիղէն վերապրողներու մեծամասնութիւնը՝ (թիւով շուրջ 100,000) ներկայիս կը բնակին Տիգրանակերտ (այժմ Տիարպէքի) քաղաքին մէջ: Նախքան ցեղասպանութիւնը Թուրքիոյ մէջ հայերն ունէին 2500 եկեղեցի, 400 վանքեր, բազմահարիւր դպրոցներ եւ առեւտրական հաստատութիւններ: Ներկայիս Իսթանպուլ քաղաքէն դուրս մնացած է 5 գործօն եկեղեցի, որոնց մեծագոյնն է Տիգրանակերտի Սուրբ Կիրակոս եկեղեցին: Արդարեւ այս եկեղեցին վերանորոգուած է 2015ին, որուն բացումին ներկայ եղած են 4000 աւելի հոգիներ, որոնց մեծ մասը ծպտեալ էին: Իսկ ցեղասպանութեան 100-ամեակին առիթով միեւնոյն եկեղեցիի մէջ սարքուած համերգին մասնակցած են 2000 ծպտեալ հայեր:

Վերջին տասնամեակին Ռաֆֆի Պետրոսեանի նախաձեռնութեամբ, իսլամացած ծպտեալ հայերու խումբեր, զբօսաշրջային պտոյտներ կատարած են դէպի Հայաստան: Անոնք իրենց արմատներուն մօտէն ծանօթանալէ ետք ոմանք մկրտուած են եւ առաւել հայացած վերադարձած տուն: Անոնցմէ Սէյիմը ուզած է մնալ Հայաստան եւ իր անունը փոխած է Սեւանի...: Իսլամացած շատ հայեր կան ներկայիս քիչ մը ամէն տեղ, մասնաւորաբար՝ Ուրֆա, Այնթէպ, Մարտին, Վան, Սասուն եւ



Համ շէն: Դժբախտաբար Համ շէնի հայերը իսլամացած են 3-4 դար առաջ: Այսուհանդերձ անոնք կառուած կը մնան իրենց արմատներուն եւ կը պահեն իրենց ուրոյն հայադրոշմ բարբառը եւ ոմանք կ'ըսեն «Ես հայ չիմ, ես թուրք իմ»...: Նշենք նաեւ որ Տէրսիմի եւ Համ շէնի հայերն արդէն ունին իրենց հայրենակցական միութիւնները:

Հետաքրքրական էր իմանալ որ Աղթամարի հայոց Ս. Խաչ եկեղեցիի վերանորոգութեան գլխաւոր նախաձեռնութիւնը Եաշար Քամալ անունով հուշակաւոր գրող եւ լրագրողին կը պատկանի: Արդարեւ, ան իր մահուանէ առաջ իր շուրջիներուն իմացուցած է որ հայ արմատներ ունի...: Իմացանք նաեւ որ հայ արմատներ ունեցող բազմաթիւ զինուորներ կան թրքական բանակին մէջ եւս, բայց անոնք չեն կրնար տիրանալ աւելի բարձր պաշտօններու: Պարագան նոյնն է նաեւ պետական եւ այլ պաշտօնական հաստատութիւններէ ներս պաշտօնավարողներուն: Խտրականութիւն ամենուրեք...:

Ռաֆֆի Պետրոսեան յորդորեց երեւան հանել ծպտեալ հայերը եւ համագործակցիլ անոնց հետ, քանի որ վերադառնալով իրենց արմատներուն՝ կրնան օգտակար ըլլալ նաեւ հայութեան:

Միւս կողմէ կ'իմանանք թէ Թուրքիոյ մէջ ներկայիս կան աւելի քան 100,000 թաքնուած հայեր: Իսկ խառն ամուսնութիւններու բերումով, հայ արմատներ ունեցողներու թիւը կը գնահատուի քանի մը միլիոնի:

Սոյն շահեկան միջոցառումի փակման խօսքը կատարեց Գերշ. Տ. Յովնան Սրբազանի ներկայացուցիչ հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտրմեան: Ան անդրադառնալով ցեղասպանութենէն ետք ստեղծուած նոր իրավիճակի մասին՝ յայտնեց թէ տակաւին կան հարիւրաւոր հարցումներ, որոնց պէտք է պատասխանել: Անոնց մասին արդէն սկսած են իրենց բնութագրումը կատարել Թաներ Ազաւմ, Իլմիւտ Թուրք եւ ուրիշներ: Այնուհետեւ յարեց. «...Կեանքի նաւակն իւր հետքը թողած է մեր վրայ...: օր մը այդ նաւակը պիտի հասնի իր ափերուն...»:

Գնահատելի նախաձեռնութիւն մը արդարեւ, որուն համար կը նախատեսուէր աւելի բազմամարդ հասարակութիւն մը:

Գլխաւոր Հիւպատոս Արմէն Բայբուրդեանը Մասնակցել է Գալիֆորնիայի Առեւտրի Միջազգային Ֆորումին



Մայիսի 22-23-ին ՀՀ գլխաւոր հիւպատոս դոկտ. Արմէն Բայբուրդեանը Գալիֆորնիայի մայրաքաղաք Սաքրամենթոյում մասնակցել է Գալիֆորնիայի առեւտրի պալատի (California Chamber of Commerce) կազմակերպած միջգալիֆորնիայի ֆորումին: Միջոցառումներ մասնակցում էին նահանգային առաջնորդները, ԱՄՆ առեւտրի դեպարտամենտի բարձրաստիճան պաշտօնեաներ, հանրային եւ մասնաւոր խոշորագոյն ընկերութիւնների ղեկավարներ եւ բազմաթիւ երկրների գլխաւոր հիւպատոսներ: Դեպքան Բայբուրդեանը մասնակցել է նաեւ Գալիֆորնիայի առեւտրի պալատի աւանդական նախաճաշին, որը կազմակերպուեց 94-րդ անգամ: Գալիֆորնիայի քաղաքական ու տնտեսական առաջնորդների համար այն կարեւորագոյն հարթակ է հանդիսանում նահանգի տնտեսութեանը, կառավարման հա-

մակարգին եւ գործարար դաշտին առնչուող խնդիրները քննարկելու համար:

Միջոցառումների ընթացքում գլխաւոր հիւպատոս Բայբուրդեանը Գալիֆորնիայի նահանգապետ Գաւին Նիւսոմի (Gavin Newsom) հետ զրոյցում երախտագիտութիւն է յայտնել Կլենտելլում Հայ-ամերիկեան թանգարանի կառուցման նպատակին նահանգային պիւտնէից 5 մլն. տոլար յատկացնելու որոշման համար: Նրանք անդրադարձել են նաեւ Հայաստանի եւ Գալիֆորնիայի գործակցութիւնը խորացնելու խնդիրներին: Գալիֆորնիայի փոխնահանգապետ էլենի Կունալակիսի (Eleni Kounalakis) հետ գլխաւոր հիւպատոսը պայմանաւորուածութիւն է ձեռք բերել առաջկայում հանդիպելու եւ Գալիֆորնիա-Հայաստան գործակցութեան օրակարգը քննարկելու համար:




Իր 40-ամեակի 40-րդ Տարեդարձին առիթով
ՀԱՐԱՍԱԹԱՄԻԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԸ
 (ՆԱԽԱՊԵՏ ԱՐՏԱԲԱԶՂ)
 Կը ներկայացնէ՝

ՓԱՐԱՏԻՍՕ ՊԱՆԴՈՒԿ

Կատակերգութիւն երեք արարով
 Գեղիմայի՝
 ԺՈՐԺ ՅԵՅՏՕ ԵՒ ՄՈՐԻՍ ՏԵՎԱԼԻԵՐ
 Բեմադրիչ՝
ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԻԱՆ

In Celebration of the 40th Anniversary of Its Founding
AGBU SATAMIAN THEATRE GROUP
 (FORMERLY ARDAVAZT)
 presents

HOTEL PARADISO

A comedy in 3 acts by
GEORGES FEYDEAU and MAURICE DESVALIERE
 Directed by
KRIKOR SATAMIAN

ՅՈՒՆԻՍ 15-16 / 22-23, 2019
 Հարաւ Կաշէ եւ Թամար Մանուկեան
 Կատարողական Արուեստից Կերտնիս Սէջ
 2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104
 Շարք օրերը ժամը 8:00-ին, Կիրակի 6:00-ին

JUNE 15-16 / 22-23, 2019
 AGBU Vatche & Tamar Manoukian
 Performing Arts Center
 2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104
 Saturday performances at 8:00 pm, Sundays at 6:00 pm

Տոմսերը կարելի է ապահովել / Tickets available at:
WWW.AGBUPAC.ORG/CALENDAR
 Մուտքի Լուր / Donation \$30

«Վէմ» Լարային Քառեակի Ելոյթը



ԳԵՈՐԳ ՔԵՕՇՎԵՐԵԱՆ

«Ձեռագիրը 1974 թուականին յանձնուած է Հրաչեայ Սեդրակեանին, որպէսզի յարմար պահու հրատարակուի թերթի ձեռով: Ձեռ գիտեր, թէ ինչու՞ բնագիրը այդ ժամանակ չէ հրատարակուած: Մենք նպատակաւ յարմար համարեցինք զայն լոյս ընծայել օրաթերթի 80-ամեակին առիթով եւ մատուցել ընթերցողներուն», - նշած է Յակոբեան:

Գիրքը հրատարակած է «Ձարթօնք» օրաթերթը: Անիկ «Ձարթօնք» մատենաշարի առաջին գիրքն է:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



- Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝
- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Յեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԻ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian

2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Վերականգնում Հայագիտական Հրատարակություններու Խորհրդային Հայաստանի Շրջանին (1920-1980)

ԴՈԿՏ. ՋԱԿԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Մուտք

Երբ նկատի ունենանք Խորհրդային Միության ներքե հայ ժողովուրդի եւ հայ եկեղեցւոյ կրած դաժան եւ դժուար տանամեակները, միւս կողմէ չենք ուզեր մոռացութեան տալ Հայաստանի հայագիտական հիմնական երկերու պատրաստութեան եւ հրատարակութեան գործը: Հարկ է անկաշկանդ կերպով արձանագրել այն անվերջ շարքը հայերէն լեզուի, պատմագիտութեան, գեղարուեստի, ճարտարապետութեան, բանասիրութեան, փիլիսոփայութեան, եւ ընդհանրապէս գրականութեան յատուկ սկզբնաղբիւրներու հրատարակութիւնները որոնք խմբագրութեան ու գիտական վերլուծումով որպէս մեծահատոր պատմագրութիւններ ի լոյս բնծայուեցան վաւերական պատմագէտներու կողմէ: Արդար պիտի ըլլայ սոյն յօդուածով մեր մատենագրական հարստութեան անդրադառնալ, թեկուզ հարեւանցի կերպով, եւ պատշաճը բնծայել Խորհրդային Հայաստանի իշխանութեանց որոնք նեցուկ ու քաջալեր հանդիսացան հայ մշակութի իսկական գանձերու պահպանումին, եւ մանաւանդ անոնց վերականգնումին:


Խորհրդային Հայաստանի պետութիւնը հայ հին մատենագրութեան գանձերը լրիւ շարքով, ի նորոյ եւ գիտական բնագիտներով հրատարակելու ձեռնարկեց 1920-ական թուականներէն ետք, յաջորդող տասնամեակներուն: Պատիւ իրենց: Որպէս ազգային եւ մշակութային անհրաժեշտ աշխատանք, հայ բանասէր գիտնականներ անյետաձգելի պարտք համարեցին շարունակելու անցեալին Վենետիկի եւ Թիֆլիսի մէջ սկսած ձեռնարկները, ուր դասական եւ միջնադարեան հայ պատմիչներու սկզբնական շարքը հրատարակուեցան: Եթէ Վենետիկեան նախկին հրատարակութիւնները հիմք կազմեցին հայ բանասիրութեան, անոնց հետեւողութեամբ այս անգամ լիաբուն եւ յաւելեալ աղբիւրագիտութեամբ եւ հետեւաբար անկրկնելի չափանիշով հայրենի բանասէրները վերականգնեցին գանձը:

Նախ Թիֆլիսի մէջ ի նորոյ ուսումնասիրութեան ձեռագրագէտ Փրոֆեսորներ Հրաչեայ Աճառեան, Ստեփան Մալխասեան, Մանուկ Աբեղեան, Գալուստ Տ. Մկրտչեան, Գարեգին Վրդ. Յովսէփեան եւ Ստեփան Կանայեան բանասէր գիտնականներուն կողմէ, եւ ապա Երեւանի մէջ լոյս տեսան կոթողական գործերը պատմագէտ Փրոֆ. Յակոբ Մանանդեանի, Հրաչեայ Աճառեանի եւ Ստեփան Մալխասեանի եւ անոնց հետեւորդ գիտնական բանասէրներուն կողմէ: Թիֆլիսեան հրատարակութեան շարքին կարելի է յիշել Ե. դարու դասական պատմիչներէն Ղազար Փարպեցիի (1904), Ագաթանգեղոսի (1909), Մովսէս Խորենացիի (1913) «Պատմութիւն Հայոց» բնագիրները՝ հրատարակուած բազմաթիւ ձեռագիրներու տարբերակներով:

Խորհրդային Կարգեր

Խորհրդային կարգեր երբ հաստատուեցան, Երեւանի պետական հրամանագրով 1920 Դեկտեմբեր 17-ին Ս. Էջմիածնի ձեռագրաց մատենադարանը պետականացաւ,

եւ երկու ամիս ետք որոշուեցաւ ստեղծել մշակութային եւ գրական-նութեան հիմնարկ, «գիտական հիմքերի վրայ դնելով Հայաստանի ժողովրդական մշակութային ուսումնասիրութեան գործը»: Զեւազարտունը էջմիածնէն Երեւան փոխադրուեցաւ 1939-ին, եւ աւելի ուշ՝ 1958-ին Ս. Մեսրոպ Մատչոցի անուամբ կառուցուած հոյակապ Մատենադարանին մէջ: Իսկոյն հայ դասական պատմիչներու բնագիրները Երեւանի մէջ շարունակուեցան հրատարակուել անխափան իբրեւ կոթողական վերջնական գործեր, անկրկնելի, այս անգամ ձեռագիրներու հարուստ հաւաքածոներու տարբերակներով: Պատիւ եւ երախտք բոլոր բանասէր գիտնականներուն որոնք նկատի չառին նեղ եւ ճնշիչ պայմաններու եւ հետզհետէ լրիւ շարքով վերածնունդ տուին մեր անցեալի դասական երկերուն որոնք մշակութային մնացորդն արգասիքը կազմեցին Խորհրդային Հայաստանի: Անոնք գիտցան եւ հաւատացին մէկ կողմ շարունակելու օրուան գաղափարախօսութիւնն ու քաղաքականութիւնը իրենց գերագոյն լծակով՝ մատենագիտական մեծագոյն աւանդով: Հետեւեալ հրատարակութիւնները որպէս նմոյշ վկաներն են որոնք զրադարանիս պատնէշ հատորները կը կազմեն: Անոնց կողքին տասնեակներ եւ աւելի, նոյնքան կարելոր հրատարակութիւններ, լոյս տեսած նոյն շրջանին:




Պատմագէտ Փրոֆ. Յակոբ Մանանդեան

1930 թուականին Փրոֆ. Յակոբ Մանանդեանի առաջին գործերը լոյս տեսան, «Կիւրուները եւ չափերը հնագոյն հայ աղբիւրներուն մ» անունով, եւ 1934-ին «Ֆէոտալիզմը հին Հայաստանում» կարեւոր երկերը Խորհրդային Միութեան սկզբնական դժուար տարիներուն: Երկու տարի անց նոյն Յակոբ Մանանդեանի «Հայաստանի գլխաւոր ճանապարհները ըստ Պեղեղիկեան քարտէզի» գործը, որուն յաջորդեցին նոյն պատմաբանին հոյակապ եւ անփոխարինելի «Քննական տեսութիւն Հայ ժողովրդի պատմութեան» երկու հատորները: Այս վերջինները վերջնական դրոշմը դրին հայ ժողովուրդի պատմագիտութեան ճիւղին վրայ, նկատի ունենալով մեծ պատմագէտին քննախոյզ եւ հայերէն, յունարէն ու լատիներէն լեզուներով աւանդուած աղբիւրներու լիակատար օգտագործումը՝ ձեռագրական եւ մանաւանդ սեպագիր արձանագրութիւններու հիմամբ:

Լեզուագէտ Փրոֆ. Հրաչեայ Աճառեան

Հայ ժողովուրդի բոլոր ժամանակներու մեծագոյն լեզուաբանն ու բառարանի հեղինակը հանդիսացաւ Փրոֆ. Հրաչեայ Աճառեանն ու Սովետական դառն շրջանին, որուն «Հայերէն Լեզուի Արմատական Բառարանը» 1926 թուին նախ ձեռագիր-խմորատիպ, եւ ապա 1971-1979 թուականներուն չորս պատկառելի հատորներով հրատարակուեցան Երեւանի Պետական Համալսարանի եւ Ակադեմիայի կողմէ Երեւանի մէջ: Նախապէս Աճառեանի «Հայոց անձնանունների բառարանը», դարձեալ չորս հատորներով լոյս տեսած էր 1944-ին, իսկ աւելի ուշ, 1951 թուին, իր հոյակապ «Հայոց լեզուի պատմութիւնը» երկու մեծագիր հատորներով, եւ «Լիակատար քերականութիւն Հայոց լեզուի» հատորը՝ 1955-ին: Բոլորն ալ անկրկնելի գործեր որոնք ամբողջական նպաստ բերած են հայագիտութեան:



Ստեփան Մալխասեան

«Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն», 7-րդ դարու շատ կարեւոր եւ անփոխարինելի գործը որպէս չորրորդ տպագրութիւն Փրոֆ. Ստեփան Մալխասեան կը հրատարակէր 1939-ին լիակատար ծանօթագրութիւններով, գրուած Բագրատունեաց Սեբէոս Եպիսկոպոսի կողմէ, հինգ ձեռագիր եւ երկու տպագիր օրինակներու բաղադրութեամբ: Պատմագրութիւնը ծանօթ է որպէս «Սեբէոսի Պատմութիւն ի Հերակլին» որմէ օտար հայագէտներ կատարած են իրենց ուսումնասիրութիւնները՝ Հայաստանի, Բիւզանդիոսի եւ Պարսկաստանի նախնական դէպքերուն վերաբերեալ, երբ ժամանակակից պատմիչներ չեն գրած այդ մասին: Տարիներ ետք, 1979-ին, Գեորգ Աբգարեան հրատարակեց նոյն երկը «Պատմութիւն Սեբէոսի» անունով, լիակատար ծանօթագրութիւններով, որ այժմ կը նկատուի վերջնական եւ լաւագոյն հրատարակութիւնը:

1943-ին Ստեփան Մալխասեանի քառահատոր «Հայերէն բացատրական բառարան»ը հանդիսացաւ խոշոր ներդրում մը հայագիտութեան կալուածէն ներս որպէս աշխարհաբար լեզուի լրացուցիչն ու աջակիցը Աճառեանի «Արմատական բառարան»ին: Զկայ աւելի մանրամասն ու ամբողջական հայերէն լեզուի բառարան մը որ կարենայ լրացնել արեւմտահայերէնի լիագոյն պահանջը Մալխասեանի յիշեալ բառարանէն զատ:

Հայագիտական Այլ Հրատարակություններ

Լէո (Առաքել Բաբախանեան) պատմաբանի «Հայոց Պատմութիւն»ը երեք ծաւալուն հատորներով, 1946-1969 տարիներուն հրատարակուած, հայ ժողովուրդի ամբողջական պատմութիւնը կը ներկայացնէ, խմբագրութեամբ հոյ մը պատմաբաններու՝ Աղայեանի, Առաքելեանի, Գալուսեանի, Երեմեանի, Խաչիկեանի, Յակոբեանի, Յովհաննիսեանի եւ Ներսիսեանի: Նոյն շրջանին դասական մատենագիրներու երկերը ի նորոյ խմբագրութեան մէջ եւ ծանօթագրութիւններով ըստ հետեւեալին: Մանուկ Աբեղեանի կորիւն պատմիչի «Վարք Մաշտոցի» երկը (1962), Ա. Աբրահամեանի Եգնիկ կողմացիի «Եղծ Աղանդոց» գրքի աշխարհաբար թարգմանութիւնը (1970), «Յովհաննէս Իմաստասիրի մատենագրութիւնը»ը Աշոտ Գ. Աբրահամեանի կողմէ (1956), Ներսէս Շնորհալիի «Ողբ Եղեախոյ» երկը աշխարհաբար թարգմանութեամբ Մանուկ Մկրտչեանի կողմէ (1973), Գրիգոր Նարեկացիի «Մատեն Ողբերգութեան (Նարեկ) աղօթամատենի աշխարհաբար թարգմանութիւնը Վազգէն Յակոբեանի (1970), եւ Մովսէս Խորենացիի «Պատմութիւն Հայոց» երկի լաւագոյն աշխարհաբար թարգմանութիւնը Ստեփան Մալխասեանի կողմէ (1968):

Այս բոլորն յարակից մատենագիտական եւ աղբիւրագիտական հսկայ աշխատանք ի յայտ եկաւ, ինչպէս Մանուկ Աբեղեանի «Հայոց հին գրականութեան պատմութիւն»ը երկու հատորներով (1944-1946), «Դիւան հայ վիմագրութեան», «Հայոց պատմութեան աղբիւրագիտութիւնը», «Հայ գրականութիւնը 7-րդ դարում», եւ յատկապէս Փրոֆ. Լեւոն Խաչիկեանի «Ժե դարի հայերէն ձեռագիրների յիշատակարանները» (1955), «Հայագրագրութիւն եւ բանահիւստութիւն» Խ. Ա. Փոր-քէեանի (1971), եւ «Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարկոծ վարպետներ» Ս. Բարխուդարեանի (1963):

Եզրափակում

Վերելի մասնակի հասկաքաղը կատարեցինք միայն գաղափար մը տալու համար ընթերցողին որ Խորհրդային դրութեան ներքե Հայաստան որքան հաւատարմօրէն ու գիտական միջոցներով վերածաղկեցուցաւ հայ ժողովուրդի հնագրական մշակութիւնը, գրականութեան եւ այլ բարձր արուեստներու բնագաւառներուն մէջ: Այսինքն, բունակալ դրութիւնը այլապէս արգելք չէր գտնէ այս մարզին մէջ, եթէ նոյնիսկ Հայաստանի մէջ անկախաբար մեծածաւալ հատորներ գովքը հիւսեցին համայնավար դրութեան եւ անոր հետեւանք եղող ուսուցումներուն, կամայ թէ ակամայ:

Նշուած հրատարակութեանց վրայ հարկ է աւելցնել պարբերագիրքերէն «Պատմա-բանասիրական Հանդէս»ը՝ սկսեալ 1958-էն, «Բանբեր Մատենադարանի», «Բանբեր Երեւանի Համալսարանի» հանդէսները եւ գուտ գրական այլ ամսագրեր որոնք մատենագրական շատ կարեւոր յօդուածներով ծաղկեցուցին հայագիտութիւնը, առանց դոյզն չափով զոհ դառնալու օրուան վարդապետութեան որուն տուրքը վճարեցին այլ ճամբով:

Քաղցրայուշերու Տեսրակէս Անմահն Լուսինէ Չաքարեան Պալեանի Քաղցր Յիշատակին

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Ուրախութեամբ իմացանք, թէ Յունիս 1, 2019-ին Երեւանի մէջ բացուած պիտի կատարուի անմահն Լուսինէ Չաքարեանի անունը կրող Տուն-Թանգարանին: Բացման ներկայ պիտի ըլլան Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ը, պետական այլեր եւ Սփիւռքէն մեծաթիւ հիւրեր:

Լուսինէ Չաքարեան ծնած է Յունուար 1937-ին, Վրաստանի Ախլցխա քաղաքին մէջ: 1952-ին ընտանեօք Երեւան կը տեղափոխուին եւ հոն կը հետեւի Երեւանի պետական երաժշտանոցի ձայնամարդութեան դասերուն: Հոն էր որ իր հրեշտակային ձայնով եւ կատարումով գրաւեց մեծաւորներու ուշադրութիւնը:

Երաժշտանոցը աւարտելէ ետք, կը հրաւիրուի ռատիօյի, հեռատեսիլի, պետական օփերայի մէջ գործելու, բայց մանաւանդ Վազգէն Վեհափառի ուշադրութիւնը կը գրաւէ եւ մօտ 14 տարի կ'երգէ Ս. էջմիածնի երգչախումբին մէջ, բոլոր պաշտօններու մէջ ալ եղած է գլխաւոր երգչուհի դերով:

Լուսինէ Չաքարեան ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ Եւրոպայի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Հարաւային Ամերիկայի եւ Միջին Արեւելքի բազմաթիւ մեծանուն սրահներուն մէջ ելոյթ ունեցած է եւ հայ երգը տարած է աշխարհի բազմաթիւ երկիրներ: Ան իր երգերով կարողացաւ բոլոր ունկնդիրներուն սիրտն ու հոգին, բոլորին միտքն ու ոգին կապել հայ երգի, հայ ստեղծագործ ու հանճարեղ ժողովուրդի մտքին հետ:

Դեկտ. 30, 1992-ին, 55 տարեկան հասակին մեզմէ ֆիզիքապէս հեռացաւ Լուսինէ Չաքարեան:

1993-ին, Վազգէն Վեհափառի բարի կարգադրութեամբ, Լուսինէ Չաքարեան վերջնականապէս կը թաղուէր էջմիածնի Ս. Գայանէ եկեղեցիի պուրակին մէջ:

1986-ին, Արեւմտեան Թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի արտօնութեամբ հիմը դրուեցաւ Կլէնտօնի Հայ Առաքելական փոքր Մուխի մը, վարձու փոքր եկեղեցիի մէջ Ս. պատարագ կատարելով, որ ներկայիս թահանակ քաղաքի Ամենայն Սրբոց եկեղեցին է: Այդ օրերու մեր Մուխի հովիւն էր Հայաստանէն ժամանած՝ Տէր Կոմիտաս աւագ քահանայ. Շիրինեանը, որ թէ Վեհափառին, թէ Լուսինէ Չաքարեանի եւ թէ անոր ամուսին՝ Խորէն Պալեանին մօտէն ծանօթ էր:

Օգոստոսի շատ տաք Ուրբաթ օր մը, հոգելոյս Տէր Կոմիտասը հեռաձայն ըրաւ, ըսելով որ Հայաստանէն ժամանած Լուսինէ Չաքարեանը այս Կիրակի մեր եկեղեցին պիտի գայ եւ մեր 8 հոգինոց համեստ երգչախումբին հետ պիտի երգէ: Եւ Տէր Հայրը սկսաւ խօսիլ Լուսինէ Չաքարեանին մասին, ըսելու համար թէ ո՞վ է եկող հիւրը:

Անշուշտ, ես վախէս անմիջապէս միջամտեցի ըսելով. «Տէր հայր, գիտե՞մ ով է Լուսինէ Չաքարեանը, բայց զինք մեր համեստ Մուխին փոքր եկեղեցին հրաւիրելը յարմար է»: Տէր հայրը պատասխանեց. «Գիտե՞մ որ թերթերու չենք կրնար ըսել»: Այն ատեն



Սարգիս Մուրատեանի Armenian Teletime-ը կար, որոշեցինք անմիջապէս կապ պահել. ան ալ արդէն քանի մը օր առաջ իր ծրագիրը յանձնած ըլլալով, չկրցաւ մեզի օգտակար ըլլալ:

Ուրեմն մնացինք անձնական հեռաձայններ ընելով ժողովուրդը տեղեակ պահել, ըսելով թէ Լուսինէ Չաքարեանը մեր եկեղեցին պիտի գայ եւ երգեցողութեան մասնակցի: Կիրակի, Ս. Պատարագի օրը, Լուսինէ Չաքարեան մեր եկեղեցին եկաւ: Եղանակը շատ տաք էր եւ մենք մեր տուններէն հովահարներ բերած էինք, բայց անօգուտ էր:

Երբ մեր հիւրը եկաւ, մենք ալ շուարեցանք՝ ի՞նչ ըսել, ի՞նչ բացատրութիւն տալ, քանի որ հազիւ 40-50 հաւատացեալներ կային եկեղեցին մէջ, բայց Լուսինէ Չաքարեան նկատելով մեր շուարումը, ըսաւ.

Բնաւ մի մտահոգուիք, անգամ մը որ Ս. պատարագը սկսի, մենք այլեւս մտքով ու հոգիով Աստուծոյ հետ ենք: Բնաւ տարբերութիւն չի ըներ, թէ եկեղեցին մէջ քանի հոգի կայ...

Եւ այդպէս ալ եղաւ: Ս. պատարագը հոգեպարար աննախընթաց մթնոլորտի մէջ կատարուեցաւ եւ փոքրիկ եկեղեցին կարծես մեծ տաճար մը ըլլար:

Պատարագէն ետք, վարի սրահը իջանք եւ հիւրասիրութիւն մը կազմակերպած էինք մեր թանկագին հիւրին: Ատենապետի պաշտօնիս բերումով հիւրին կողքը նստած էի եւ պարզ խօսակցութեան ընթացքին հրաշքի մասին խօսք եղաւ, երբ յանկարծ Լուսինէ Չաքարեանը դարձաւ եւ ըսաւ, թէ «ինձի ալ նման հրաշք մը պատահած է»: Եւ պատմեց, թէ ինչ ծնած է Ախալցխա: Փոքր տարիքին, օր մը դպրոցէն վերադարձին, Փոցխով գետի հին, փտած կամուրջով տուն գացած ատեն, սահած եւ ինկած է Փոցխով գետը: Ծերուկ կին մը տեսած է պոստիկ աղջկան գետ ինչալը եւ սկսած է բարձրաձայն կանչել. «Երեխան գետը ինկաւ, գետը ինկաւ...»: Ժողովուրդը կը հաւաքուի, բայց տակաւին չեն գիտեր թէ ի՞նչ ընել: Յանկարծ, 13-14 տարեկան պատանի մը, որ աչքքան ալ լաւ լողալ չէր գիտեր, գետ նետուեցաւ եւ փրկեց զիս գետին եզերքը տանելով, ըսաւ Լուսինէ Չաքարեան, ղէմքին վրայ մեծ ուրախութիւն մը ուրուագծելով:

Բոլորս ալ փառք տուինք Աստուծոյ, որ ճիշդ ատենին այդ

Իրաքահայերու Ընտանեկան Միութեան Կազմակերպած Մայրերու Օրուայ Տօնակատարութիւն



Շաբաթ, Մայիս 11, 2019 իրաքահայերու Հայ ընտանեկան վարժարանի տնօրէնութեան կողմէ կազմակերպուած էր շատ ճոխ ձեռնարկ մը, նուիրուած Հայ Մայրերուն, որոնք ընթացքին յարգանքի տուրք տրուեցաւ հայ գրականութեան անթափառ փառքերէն՝ Յովհաննէս Թումանեանին, անոր ծննդեան 150 ամեակին առիթով:

Ձեռնարկը իր հովանաւորութեամբ կը պատուէր Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, որուն ներկայացուց արժանապատիւ Տէր Յովսէփ աւագ քահանայ. Յակոբեան: Տէր հայրը, իր բացման և փակման աղօթքով և ջերմ խօսքերով մաս կազմեց յայտադրին:

Վարժարանի ժրջան տնօրէնուհի՝ Տիկին Անահիտ Խաչատուրեանի բացման և բարի գալուստի ջերմ խօսքէն ետք, խօսք առաւ վարժարանի վարչութեան ատենապետի՝ Խաչիկ ձանոյեան: Ան դպրոցի բոլոր պատասխանատուներուն, ինչպէս նաեւ իրաքահայերու Ընտանեկան Միութեան Կեդրոնական Վարչութեան անունով շնորհաւորեց ներկայ և բացակայ հայ մայրերը, մաղթելով որ մեր հերոսածին և թանկագին հայ մայրերուն շուքը և ներկայութիւնը անպակաս ըլլան իրենց ընտանիքներէն և զաւակներէն:

Վարժարանի նուիրեալ փոխտնօրէնուհի՝ տիկին Բարբիկ Գէորգեան, շատ գեղեցիկ ելոյթով ներկայացուց Յովհաննէս Թումանեանի կենսագրութիւնը և անոր գրականութեան առանձնապատկութիւնը:

Տիկին Գէորգեան բոլոր ներկաներուն անունով խոնարհում ըրաւ Ամենայն հայոց բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեանի յիշատակի առաջ: Ժողովուրդը երկարատեւ ծափերով գնահատեց տիկին Գէորգեանի խօսքը:

Ապա սկսաւ վարժարանի աշակերտութեան հոցակապ հանդէսը, որ հայ մայրերուն նուիրուած էր: Միաժամանակ՝ հայ գիրին, գրականութեան, հայրենիքին ու մանաւանդ Յովհաննէս Թումանեանի նուիրուած 31 կտորներէ բաղկացած յայտագիր մը ունեցանք՝ երգեր, արտասանութիւն, պարեր, իսկապէս տօնական մթնոլորտ մը կը տիրէր սրահէն ներս: Մօտ 250 հոգի է աւելի ծնողներ և ներկաներ, պոստիկներուն հետ միաբերան կերպով գին և խանդավառութեամբ կը գնահատէին աշակերտութեան ելոյթները:

Վերջաւորութեան, բոլոր աշակերտները իրենց ձեռքի գործ եղող բացիկներով և ծաղկեփունջերով

մօտեցան և զանոնք նուիրեցին իրենց մայրերուն:

Իրաքահայերու Միութեան Կեդր. Վարչութեան ատենապետուհի՝ տոքթ. Մարալ Անճարկուրեան և դպրոցի պատասխանատու Խաչիկ ձանոյեան մասնաւոր նուիրներով գնահատեցին վարժարանի ուսուցչուհիները՝ Մայրերօս օրուան առիթով:

Վերջաւորութեան, բոլոր հանդիսականները և աշակերտութիւնը ճաշով հիւրասիրուեցան միութեան Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Յիշենք, թէ այս տարի Նոյեմբերին, արդար հպարտութեամբ պիտի նշուի Հայ Ընտանեկան Միութեան Շաբաթօրեայ անվճար վարժարանի 40-ամեակը:

Այս դպրոցէն ներս, Ամերիկայի այս հեռաւոր ափերուն վրայ 1700-է աւելի հայ մանուկներ անվճար հայերէն գիր, պար, երգ և ասմունք սորված են: Այս դպրոցը, իրապէս օրհնութիւն մը եղած է մեր գաղութին մէջ: Բոլորին վարձքը կատար:

Այլ Ձեռնարկներ
* Իրաքահայերու Ընտանեկան Միութիւնը, գործակցութեամբ իրանահայերու և պոլսահայերու միութեանց, կազմակերպեց ծանօթ արուեստագէտ, Լոս Անճելոսի հայկական հեռատեսիլի հիմնադիր Սարգի Մուրատեանի երգարանի գիմեձօնը:

* Մաս կազմեց Պոլսահայ միութեան ղեկավարներէն Տոքթ. Յովհաննէս Գուլաքի մեծարման երեկոյին, միութեան կողմէ յուշատախտակ մը նուիրելով:

* Թուրք մտաւորական Թանէր Աքչամի Հայոց Յեղասպանութեան նուիրուած գիրքի գիմեձօնին՝ իրաքահայերու և պոլսահայերու միութեանց հետ մաս կազմեց այդ գիմեձօնին:

* Իրաքահայերու Ընտանեկան Միութիւնը, որպէս Լոս Անճելոսի Միացեալ Մարմնի անդամ, զանազան ձեռնարկներու իր մասնակցութիւնը բերած է, մանաւանդ Մեծ Եղեռնի նահատակներու ապրիլեան ձեռնարկներուն:

* Լոս Անճելոսի ՀՀ Գլխաւոր Հիւպատոսարանի հիմնադրութեան 25-ամեակին առիթով, տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը Կլէնտօնի Հիլթոն պանդոկին մէջ, որուն ներկայ եղաւ նաեւ Հայաստանի վարչապետ Պրն. Նիկոլ Փաշինեանի տիկինը՝ Աննա Յակոբեան: Միութիւնը մէկ սեղանով ներկայ եղաւ այդ ձեռնարկին:

* Ռուսական Ներկայացուցչութեան ներկայացուցչուհի Եւրալիա Գրիգորեանի կողմէ յայտարարուած էր, որ Ռուսաստանը կ'աջակցէ իրաքահայերու մշակութային և կրթական ծրագրերուն:

Հաճնոյ Հերոսամարտի 100-Ամեակին Ընդառաջ



2020 թուականին պիտի նշուի Հաճնի հերոսամարտի 100-ամեակը: Այս կապակցութեամբ «Ա1+»-ը զրուցած է «Հաճն» հայրենակցական միութեան ատենապետ, «Տեսակէտ» մամուլի ակումբի նախագահ Յովհաննէս Գրիգորեան-ձարպիկեանի հետ:

1915 -ի կոտորածներէն ետք Հաճնցիները տարագրուելով աշխարհով մէջ՝ բնակութիւն հաստատած են Արժանթինի, Լիբանանի, Ֆրանսայի, Հայաստանի, Յունաստանի մէջ եւ ստեղծած են հայրենակցական միութիւններ. պատմութեան յետադարձ ըրած է Գրիգոր-ձարպիկեանը:

Հայրենակցական միութիւններ ստեղծելու նպատակը, ատենապետի խօսքով, այն էր, որ հնարաւոր ըլլայ պահպանել հայկական մշակոյթը, ակունդները, անոնք սերունդներուն փոխանցել եւ կարողանալ հայկական հարցը

բարձրացնել:

Առաջին միութիւնը՝ «Հաճն» հայրենակցական միութեան կեդրոնական վարչութիւնը ստեղծուած է Արժանթինի մայրաքաղաք Պուենոս Այրեսի մէջ, 1930-ական թուականներուն: Որմէ ետք՝ Ֆրանսայի, Լիբանանի Պէյրութ քաղաքի մէջ, ուր նաեւ Հաճն անունով թաղամաս կայ: «Եւ 50-ական թուականներին արդէն Հայաստանում է ստեղծուել», - նշած է Գրիգոր-ձարպիկեանը: 1958-ին որոշ հաճնցիներ կոտայքի մարզի Սիլաւոյ թաղամասը նմանցնելով կիլիկիոյ Հաճն քաղաքին՝ դիմած են իշխանութիւններուն ու թաղամասը անուանած են Նոր Հաճն ու հիմնած քաղաքը:

Իսկ 100-ամեակին ընդառաջ՝ կը նախատեսուի կազմակերպել գիտաժողով՝ վերարժեւորելու հաճնցիական գաղափարը եւ մշակելու հաճնցիական ոգիի պահպանման ռազմավարութիւնը:

Թուրքիոյ «Վտանգուած Լեզուներ»ու Ցանկին Մէջ ԵՆ Արեւմատայերէնն ու Համշէնի Բարբառը

Թուրքիոյ մէջ, 23 մայիսին մայրենի լեզուով մշակութային իրաւունքներու համար պայքարի թեմայով ցուցահանդէսի բացում տեղի ունեցած է:

Akunq.net-ի փոխանցմամբ՝ 1990-ականներէն մինչեւ այսօր Թուրքիոյ մէջ անհետացման վտանգի տակ գտնուող լեզուներու պահպանման ուղղութեամբ պայքարի թեմայով սոյն ցուցահանդէսը կը կրէ հետեւեալ խորագիրը՝ «Լեզուի մը հետքերով. 90-ականներէն մինչ օրս մշակութային ոլորտի մէջ պայքարը մայրենի լեզուի պահպանման նպատակով»: Ցուցահանդէսը պիտի գործէ մինչեւ այս տարուան Յունիս 17, Պոլսոյ «Քարշը սանաթ» սրահին մէջ:

Ցուցահանդէսին ներկայացուած են վերջին 30 տարիներուն այդ բնագաւառին մէջ կատարուած աշխատանքները: Ան առաւելապէս կեդրոնացած է չերքեզերէնի, արեւմտահայերէնի, հայոց լեզուի՝ Համշէնի բարբառի, քրտերէնի եւ լազերէնի պահպանման ուղղութեամբ կատարուած քայլերու վրայ:

Յիշեցնենք, որ անցեալ տարուան տուեալներով՝ Թուրքիոյ մէջ խօսուող շուրջ 20 լեզուներ լիովին վերացման վտանգի տակ են: Անոնց մէջ են արեւմտահայերէնը, Համշէնի բարբառը, պոնտական լուսարէնը, ասորերէնը, աբխազերէնը, լազերէնը, չերքեզերէնը գնչուներու կողմէ կիրառուող ռոմաներէնը եւ

այլ լեզուներ ու բարբառներ:

Մայիս 23-ին, Թուրքիոյ մէջ տեղի կ'ունենայ մայրենի լեզուով մշակութային իրաւունքներու համար պայքարի թեմայով ցուցահանդէսի բացումը: Այդ մասին, ըստ Akunq.net-ի, կը հաղորդէ Gazete Duvar լրատուական կայքէջը:

Աղբիւրին համաձայն՝ 1990-ականներէն մինչեւ այսօր Թուրքիոյ մէջ անհետացման վտանգի տակ գտնուող լեզուներու պահպանման ուղղութեամբ պայքարի թեմայով սոյն ցուցահանդէսը կը կրէ հետեւեալ խորագիրը՝ «Լեզուի մը հետքերով. 90-ականներէն մինչ օրս մշակութային ոլորտի մէջ պայքարը մայրենի լեզուի պահպանման նպատակով»: Ցուցահանդէսը պիտի գործէ մինչեւ այս տարուան Յունիս 17, Պոլսոյ «Քարշը սանաթ» սրահին մէջ:

Ցուցահանդէսին ներկայացուած են վերջին 30 տարիներուն այդ բնագաւառին մէջ կատարուած աշխատանքները: Ան առաւելապէս կեդրոնացած է չերքեզերէնի, արեւմտահայերէնի, հայոց լեզուի՝ Համշէնի բարբառի, քրտերէնի եւ լազերէնի պահպանման ուղղութեամբ կատարուած քայլերու վրայ:

Յիշեցնենք, որ անցեալ տարուան տուեալներով՝ Թուրքիոյ մէջ խօսուող շուրջ 20 լեզուներ լիովին վերացման վտանգի տակ են: Անոնց մէջ են արեւմտահայերէնը,

Ձուիցերիացի Լրագրողները Յօդուածներ Կը Տպագրեն Եւ Ֆիլմ Կը Նկարահանեն Հայաստանի Մասին



Ձուիցերիոյ ճամբորդական լրագրողներու միութեան 16 ներկայացուցիչ ժամանած է Հայաստան՝ ծանօթանալու երկրի զբօսաշրջային գրաւչութեան:

«Արմէնպրես»-ի հաղորդմամբ՝ մօտ 1 շաբթուան ընթացքին անոնք պիտի բաժնուին 3 խումբի եւ պիտի ըլլան Հայաստանի տարբեր տեսարժան վայրերու մէջ՝ Սեւանայ լիճի, Տաւուշի, Լոռիի, Շիրակի մարզերու տարբեր գիւղերու ու քաղաքներու մէջ:

Ձեռնարկն իրականացուած է ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարարութեան աջակցութեամբ եւ Ձուիցերիոյ մէջ Հայաստանի առեւտրային ներկայացուցիչ Հայկ Յովհաննիսեանի նախաձեռնութեամբ:

Ձուիցերիոյ ճամբորդական լրագրողներու միութեան ղեկավար Ալէք Տեքոթն ըսաւ, որ շատ ճամբորդած է, այցելած տարբեր երկիրներ, սակայն Հայաստանի մասին չէր լսած:

«Հայաստանի մասին տեղեկացած եմ Ֆրանքֆոնիայի գաղափարաժողովի ժամանակ, սկսայ ուսումնասիրել երկիրը եւ որոշեցի, որ սա այն 5-6 պարտադիր այցելութեան երկիրներէն է, որ ես կը պատրաստուի ըլլալ: Արդէն իսկ սիրահարուած եմ Հայաստանին», - ընդգծեց Տեքոթը:

Խօսելով սպասուող շրջագայութիւններու մասին՝ ան շեշտեց, որ ատոնք շատ յազեցած պիտի ըլլան եւ պէտք է հասցնեն հնարաւորինս շատ բան տեսնել:

«Երեւանի մէջ պիտի այցելենք Մատենադարան, «Թուամօ» ստեղծագործական կեդրոն, Հայոց ցեղասպանութեան զոհերուն նուիրուած յուշահամալիր եւ շարք մը այլ տարբեր վայրեր: Մենք կ'ուզենք մեր ընթացողներուն մօտ ցանկութիւն յառաջացնել զալ եւ տեսնել Հայաստանը՝ բացառապէս լու երկրի պատմական հարստու-

թիւնը», - ըսաւ միութեան ղեկավարը:

Ձուիցերիացի լրագրողները կը նախատեսեն Մատենադարանի եւ «Թուամօ» ստեղծագործական կեդրոնի մասին ֆիլմ նկարահանել ֆրանսական հեռուստաընկերութիւններէն մէկուն համար՝ ներկայացնելով անցեալն ու ներկան:

«Մենք կը մտածենք, թէ ինչ համ ու հոտ տանք մեր նիւթին, որով հնարաւոր կ'ըլլայ հետաքրքրել մեր ընթերցողին եւ հեռուստադիտողին: Ծովերով, շքեղ հիւրանոցներով չըլլար, լեռներով նոյնպէս, մեր երկրին մէջ ալ ատոնք շատ են ու գեղեցիկ: Կը ցանկանք շեշտը դնել Հայաստանի հոգիի եւ խղճի վրայ», - շեշտեց Տեքոթը եւ աւելցուց, որ Հայաստանն արժանի է սիրուած ըլլալու:

Լրագրողներու հետ զրոյցին Ձուիցերիոյ մէջ Հայաստանի առեւտրային ներկայացուցիչ Հայկ Յովհաննիսեան ըսաւ, որ լրագրողները Հայաստան հրաւիրելու գլխաւոր նպատակն այն է, որպէսզի անոնք դրական տպաւորութիւններով վերադառնան իրենց երկիր:

«Մեր հիւրերը տասնեակէ աւելի յօդուածներ պիտի պատրաստեն եւ տպագրեն Հայաստանի զբօսաշրջային գրաւչութեան մասին: Ձուիցերիացի զբօսաշրջիկներուն համար մեր երկիրը շատ հետաքրքիր է, քանի որ անոնք իւրապատուկ ճաշակ ունին: Անոնց շատ բաներով չենք կրնար զարմացնել, պէտք է հետաքրքրենք արկածային շրջագայութիւններով: Շատ կը սիրեմ հեծանուային արշաւներ, քայլարշաւներ, լեռներու մէջ քայլել: Միջինէն աւելի բարձր տարիքի գուիցերիացի մեր հիւրերուն աւելի շատ կը հետաքրքրէ մեր պատմամշակութային ժառանգութիւնը», - նշեց Յովհաննիսեան:

Համշէնի բարբառը, պոնտական լուսարէնը, ասորերէնը, աբխազերէնը, լազերէնը, չերքեզերէնը գնչուներու կողմէ կիրառուող ռոմաներէնը եւ այլ լեզուներ ու բարբառներ:

Երեք Յայտնի Հայեր ՌԴ Նախագահին Պետական Պարգևներ Ստացած են

Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին Քրեմլի մէջ պետական պարգևներ յանձնած է: «Հայերն այսօր»-ը, յղում կատարելով Ռուսարմինֆոյին, կը յայտնէ, որ պարգևներ ստացած են նաեւ Ռուսաստանի մէջ բնակող երեք ճանչցուած հայեր:

ՌԴ ֆուտպոլի ֆետերասիոնի

փոխնախագահ Նիկիտա Սիմոնեանին շնորհուած է Ռուսաստանի Դաշնութեան ֆիզիքական կրթութեան վաստակաւոր գործիչի պատուաւոր կոչում: RT հեռուստաընկերութեան գլխաւոր խմբագիր Մարգարիտա Սիմոնեան պարգևատրուած է «Ալեքսանտր Նեսկի» շքանշանով, իսկ Ռուսաստանի Առողջապահութեան եւ ընկերային զարգացման նախարարութեան գլխաւոր մանկաբարձ-կնոջաբան, Ռուսաստանի բժշկական գիտութիւններու ակադեմիայի ակադեմիկոս Լէյլա Աղամեան ստացած է «Հայրենիքին մատուցած ծառայութիւններ»-ու 2-րդ աստիճանի շքանշան:

Սոֆիայի Մեջ Կայացած Է Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» Թարգմանութեան Շնորհանդէտը



Պուլկարիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան աջակցութեամբ եւ հովանաւորութեամբ Մայիս 22-ին Սոֆիայի Ազգային գրադարանին մէջ տեղի ունեցաւ միջնադարի հայ մեծագոյն գրող եւ փիլիսոփայ Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան» ռուսերէն թարգմանութեան շնորհանդէսը:

Ինչպէս «Հայերն այսօր»-ին կը յայտնեն ԱԳՆ մամլոյ ծառայութեան, ձեռնարկի սկիզբը նոր հրատարակուած գիրքերը՝ որպէս աղօթամատեան, օրհնուեցան Հայ առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հօր կողմէ, այնուհետեւ տպագրութեան նախաձեռնող եւ ձեռնարկի կազմակերպիչ Սոնա Մինասեան շնորհանդէսի բազմաթիւ մասնակիցներուն ներկայացուց Նարեկացիի եւ անոր գրական ժառանգութեան գլուխգործոցը՝ «Մատեան ողբերգութեան» աշխատութիւնը՝ որպէս հայ միջնադարեան գրական մտքի ամենամեծ արգասիքը: Բա-

նախօսը նշեց, որ գործը կը պատկանի երբեք ստեղծուած գեղարուեստական մեծագոյն արժէքներու թիւին եւ կ'ամփոփէ այն լաւագոյնը, որ ստեղծած է հայ հաւաքական միտքը հնագոյն ժամանակներէն մինչեւ 10-րդ դարը:

Ձեռնարկին ընթացքին ընթերցուեցան հատուածներ «Մատեան ողբերգութեան» աշխատութեան: Հնչեց հայ հոգեւոր երաժշտութիւն, ներառեալ Կոմիտասի ստեղծագործութիւնները՝ երգչուհի Մարի Բասմաջեանի եւ ջութակահար Նարինէ Վարդանեանի կատարմամբ:

Ձեռնարկին, որուն աշխոյժ մասնակցութիւն ունեցան դեսպան Արմէն Սարգսեան եւ դեսպանութեան անձնակազմը, ներկայ էին Սոֆիայի մէջ հաւատարմագրուած դեսպաններ, դիւանանագէտներ, արուեստի եւ գրականութեան գործիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

«Լրջացէ՛ք»

Շարունակուած էջ 6-էն

կատարուեցաւ Թաւշեայ յեղափոխութիւնը:

Թաւշեայ յեղափոխութեամբ Հայաստանի Գործադիր եւ Օրէնսդիր իշխանութիւններու բարեփոխումով, անոնց ճարտարապետ Նիկոլ Փաշինեանը հաւանաբար կ'ակնկալէր, որ ի տես այս բարեփոխումներուն առթած խանդավառութեան, դատաիրաւական համակարգն ալ նոյնպիսի բարեփոխման կ'ենթարկէր ինքզինք: Բայց ոչ միայն այդ ակնկալութիւնը ի դերեւ եկաւ, այլ նախկինները նոյնիսկ չվարանեցան փորձել վարկաբեկել, խոչնդոտել ու ձախողեցնել կատարուած յառաջխաղացքը: Նախկին իշխանութեանց ծառայող դատաւորներու կողմէ Քոչարեանի երկրորդ անգամ ըլլալով կալանքէ ազատ արձակումը պատճառ դարձաւ, որ Փաշինեան դիմէ դատարաններու մուտքը արգիլելու մի քանի ժամուայ խորհրդանշական, բայց ոչ սահմանադրական քայլին, ազդարարելով, որ կարգը հասած է դատաիրավական համակարգի արմատական եւ հիմնական բարեփոխման: Բոլորիս համար յստակ է երկրէն ներս օրէնքի գերակայութեան հրամայական անհրաժեշտութիւնը, որովհետեւ անկէ կախեալ է միւս բոլոր որոշումներու զարգացումը: Անոնք որոնք կատարուածին մէջ մագ կը փնտռեն,

թող չիշեն ծախուած դատաւորներու պատճառաւ Հայաստանի մէջ իրենց դատը կորսնցուցած բայց Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանին մէջ նոյն դատը շահածներու շարանը: Թող չիշեն կեղծուած ընտրութիւնները արդարացող Սահմանադրական Դատարանի անիրաւ որոշումները: Թող չիշեն ժողովուրդի հարստահարման արդիւնք միլիոնատէր դարձած դատաւորներու շարանը:

Հայաստանի Գ. Հանրապետութեան պատմութեան մէջ լրջանալու հրապարակային այս կոչը երկրորդն է: Առաջինը, ինչպէս մեր ընթերցողները կրնան չիշել, առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի «Պատերազմ թէ՞ Խաղաղութիւն. Լրջանալու Պահը» կոչ/յօդուածն էր: Այդ կոչով, առաջին նախագահը դեղին քարտ ցոյց չտուաւ որեւէ մէկուն, այլ հրաւիրեց բոլորին, որ հրապարակային քննարկումներով անկեղծօրէն արժեւորեն օրուան իրավիճակը եւ ըստ այնմ որոշումներու յանգին: Դժբախտաբար, փոխանակ ընդառնալով այդ կոչին, մարդիկ ամբողջապէս ելոյթներով խեղաթիւրեցին իրականութիւնները, ծածկելու համար իրենց մերկ մտածողութիւնը: Ազգովին ձեռք տուինք կարեւոր առիթ մը, համազգային քննարկմամբ լուծումներ որոնելու մեր խնդիրներուն, եւ չարաչար սուտեցինք:

ժընեւի Մեջ Կայացած Է Ժան Պողոսեանի Ստեղծագործութիւններու Յուլցադրութեան Բացման Արարողութիւնը



Մայիս 23-ին Ժընեւի մէջ Միաւորուած ազգերու կազմակերպութեան գրասենեակի Ազգերու պալատին մէջ տեղի ունեցաւ անուանի արուեստագէտ, «Պողոսեան հիմնադրամի» համանախագահ Ժան Պողոսեանի ստեղծագործութիւններու ցուցադրութեան բացման արարողութիւնը:

Ինչպէս «Հայերն այսօր»-ին կը յայտնեն ԱԳՆ մամլոյ ծառայութեան, «Հրադար» խորագիրը կրող այս ցուցադրութիւնը կազմակերպուած էր Ժընեւի մէջ ՄԱԿ-ի գրասենեակէն ներս Հայաստանի, Լիբանանի, Պելճիգայի եւ Ֆրանքոֆոնիայի մշտական ներկայացուցչութիւններու համատեղ ջանքերով:


Մասնակիցներուն ուղղուած իր ողջոյնի խօսքին մէջ Ժընեւի ՄԱԿ-ի գրասենեակին մէջ Հայաստանի մշտական ներկայացուցիչ Անդրանիկ Յովհաննիսեան մասնաւորա-

պէս նշեց, որ Ժան Պողոսեանն, իր արուեստին մէջ օգտագործելով կրակն ու ծուխը, ի ցոյց կը դնէ, որ ատոնք կրնան խորհրդանշել ոչ միայն պատերազմն ու աւերածութիւնը, այլեւ՝ ծառայել ստեղծագործելու ու գեղեցիկն արարելու արուեստին: Ան ընդգծեց, որ արուեստն ու մշակույթը՝ որպէս համամարդկային արժէքներ, լաւագոյն հնարաւորութիւն կ'ընձեռեն խաղաղութեան ու համակեցութեան ուղիերով հանդէս գալու համար: Դեսպան Յովհաննիսեան բարձր գնահատեց տարիներ շարունակ «Պողոսեան հիմնադրամի»-ի կողմէ Հայաստանի մէջ իրականացուող բարեգործական գործունէութիւնն՝ ուղղուած, մասնաւորապէս, արուեստի, մշակույթի ու կրթութեան զարգացման:

Յուլցադրութիւնը հանրութեան համար բաց պիտի ըլլայ երկու շաբաթ:

Այսօր, նման առիթ մը դարձեալ ներկայացած է մեզի: Ո՞րն է մեր ընելիքը: Կառուցողական թէ՞ քանդիչ մօտեցում կը դրսեւորենք: Մեր համեստ կարծիքով, ժամանակն է, որ Թաւշեայ յեղափոխութիւնը, Գործադիրն եւ Օրէնսդիրն ետք, հիմնովին բարեփոխէ Հայաստանի դատաիրաւական համակարգը: Որպէսզի երկրէն ներս

օրէնքի գերակայութիւնը ամբօրէն հաստատուի: Որպէսզի թէ՛ Հայաստանի քաղաքացին եւ թէ՛ սփիւռքահայը վստահութեամբ լծուին շինարար աշխատանքի, կերտելու իրենց երազած Հայաստանը: Մի-ԱՅՆ այդ մարմինը իրաւասու է դեղին կամ կարմիր քարտ ցոյց տալու երկրի անդորրը խանգարողներուն: Այո՛, լրջանա՛ք:



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՂԻ ՎԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

ՄԱՅ ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆԻ

Խոր ցաւով իմացանք քաղաքիս ծանօթ մտաւորականներէն եւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմի նախկին անդամներէն՝ Սահակ Թուֆճեանի մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի Մայիսի 23ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

«Մասիս»ի խմբագրութիւնն ու աշխատակազմը իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկ. Լիւսի Թուֆճեանին, զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր անոնց որոնք անձամբ, գրութեամբ, հեռախօսով, ծաղկեպսակով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան մեր հարագատին՝ Յարութ Թաւուքճեանի մահուան առթիւ, ամօքելով մեր սուգը:

Մասնաւոր շնորհակալութիւն նաեւ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Փեթոյեանին եւ Ս.Գ.Հ.Կ. Վարիչ Մարմինն, Հ.Բ.Ը.Մ.ի Գրիգոր Սաթամեան թատերախումբի վարչութեան եւ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմինն:

Տիկ. Անի Թաւուքճեան Մարտիկեան

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Յարութ Թաւուքճեանի մահուան տխուր առիթով այս կու գանք մեր խորին շնորհակալութիւն կը յայտնենք Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Փեթոյեանին, Ս.Գ.Հ.Կ. Վարիչ Մարմինն եւ յարակից կառույցներուն, Հ.Բ.Ը.Մ.ի Սաթամեան թատերախումբին եւ բոլոր անոնց որոնք անձամբ, գրութեամբ, հեռախօսով, ծաղկեպսակով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ մասնակից եղան մեր հարագատին՝ Յարութ Թաւուքճեանի մահուան առթիւ, ամօքելով մեր սուգը:

Տէր եւ Տիկ. Գեորգ եւ Մարալ Թաւուքճեան

«Վէմ» Լարային Քառեակի Ելոյթը

Շարունակուած էջ 8-էն

«Ես սիրեցի» եւ «Հաշուեյարդար»ը:

Լարային քառեակի մեկնաբանութեամբ ապա հրամցուեցաւ Խաչատուրեանի «Դիմակահանդէսի Պարը» (Valse from the Masquerade Suite) եւ Կոմիտասի «Չինար ես» ն ու «կաքաւիկը»

Յայտագրի վերջին մասով դարձեալ բեմ հրաւիրուեցաւ Տանիէլ Սէկընը, որ ներկայացուց Ալան Յովհաննէսի «Եար Նազանի»ն: Ան բացատրեց թէ ինչպէս երիտա-

սարդ սիրահարը ճամբայ ելած էր գտնելու՝ իր սազն ու հոգեհատորը: Առ ի գնահատանք՝ հանդիսատեսները յոտնկայս ծափահարութեամբ ողջունեցին արուեստագէտները:

Յայտագրի աւարտին՝ Գէորգ Քէօզկէրեան շնորհակալութիւն յայտնեց արուեստագէտներուն, զեղարուեստական ղեկավար Մովսէս Պօղոսեանին եւ հանդիսատէսներուն ու ապա հրաւիրեց բոլորը որ մասնակցին հիւրասիրութեան եւ միեւնոյն ժամանակ մօտէն ծանօթանան արուեստագէտներուն:

Ծնողքի մը Տպաւիրութիւնը

Շարունակուած էջ 8-էն

րով կարելի եղաւ սոցն միջոցարման պատրաստութիւնը եւ իրագործումը, որպէս աշակերտներու կողմէ հրաժեշտի ուղղերձ մը մինչ անոնք դասարան կը փոխեն ու Հայերէն լեզուի հմտութեան մէջ նոր հորիզոններ կը նուաճեն:

2րդ դարու հարաւային Քալիֆորնիոյ մէջ հոգեմտային հասակ առնող հայ պատանի սերունդի մը մէջ, նախ սէր սերմանել հանդէպ մեր գրական հարստութիւններու, ապա գանոնք խանդավառել որ սոցն արժէքները բեմականացնեն ու այժմէական միջոցարուամբնութեամբ արուեստասէր ունկնդիրներու ներկայացնեն, նուազ հերոսութիւն մը չէ:

Վստահ եմ որ ինձ նման շատ մը ծնողներ այդ երեկոյ ակնաստես եղան թէ ինչպէս մատղաշ սերուն-

դի պատկանող ու կեանքի մէջ ապահովութիւն, ընդունակութիւն, իմաստ եւ ինքնութիւն փնտռող պատանի-պարմանուհիներ, կրնան մաքուր ու պերճ սիրոյ մասին լսել, զայն հասկնալ, սովորիլ, այդ սէրը հագուիլ, արտասանել, պարել, նուազել ու արտայայտել:

Այսպիսով՝ «Լուսաւորիչի կանթեղ»ի, մեր հաւատքի ու ինքնութեան համար ինկած նահատակ նախնիներուն ու մեր ազգի բոլոր հերոսներուն պլլլացող պատրոյգները պիտի չմարին, այլ նոր իւղերով պիտի նորոգուին, ճրագ պիտի տան ու լուսաւորեն մեր եւ մեր սերունդներուն ճանապարհները:

Յաջողութեան դափնեպսակ մը եւս Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի հայապահպանման առաքելութեան մէջ: Յարատե՛ւ վերելք:

«Տարուայ Եղանակները»

Շարունակուած էջ 14-էն

Դանիէլ Երաժիշտը վարպետին է յանձնել իր թարգմանած (ռուսերէնից) «Ամառ», «Աշուն», «Ձմեռ» բանաստեղծութիւնները՝ նշելով, որ սպասում ենք մի նոր «Տարուայ եղանակները» շաբթի՝ միջոցեանական շնչով...

Վերջապէս, 2006-ին էդուարդ Միրզոյեանն աւարտեց «Տարուայ եղանակները» երգաշարը: Այն լոյս տեսաւ 2009-ին, կոմպոզիտորի վոկալ ստեղծագործութիւններով ժողովածուում: «Տարուայ եղանակները» մասին ժողովածուի խմբագիր, ամերիկահայ դաշնակահար Շահան Արծրունին գրել է. ««Տարուայ եղանակները» ոճականօրէն դրանք արմատապէս տարբերում են Միրզոյեանի միւս ստեղծագործութիւններից: Երաժշտութիւնը սուր է, խորհրդաւոր եւ գուսպ: Մեղեդային լեզուն անկրկնալին է, ու իմիջ բաբախիւնը՝ ջղաճիգ, հարմոնիկ բառապաշարը՝ լարուած եւ երաժշտական կառուցուածքը՝ նօսր: Տպաւորութիւնը, այնուամենայնիւ, ապշեցուցիչ է»: Ստեղծագործութիւնն ամբողջութեամբ առաջին անգամ

կատարել է Նունէ Բադալեանը 2006-ին՝ Միրզոյեանի ծննդեան 85-ամեակի տօնակատարութեան ժամանակ, այն կատարել է նաեւ Յասմիկ Բաղդասարեանը: Յասմիկ հանգում է «Տարուայ եղանակները» հնչել է անգամ Նիւ Եորքում՝ քրեացի երգչուհի Վան Չանգ Կիմի եւ Շահան Արծրունու կատարմամբ:

«Նարեկացի» արուեստի միութիւնում՝ գրքով-երգաշարի շնորհանդէսի ժամանակ, երաժշտական կատարումներով ներկայացան նաեւ Աննա Պօղոսեանը (սոպրանօ) եւ Մարգարիտ Սարգսեանը (դաշնամուր):

Երեկոյին ներկայ էր էդուարդ Միրզոյեանի որդին՝ անուանի բժիշկ, բժշկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Արշակ Միրզոյեանը: Դանիէլ Երաժիշտի եւ էդուարդ Միրզոյեանի մտերմութիւնը ներկայացնող հետաքրքիր յիշողութիւններն աւելի տպաւորիչ դարձրեցին այս միջոցառումը:

Նշենք, որ այս երգաշարը էդուարդ Միրզոյեանը նուիրել է Դանիէլ Երաժիշտին:

Քաղցրայուշերու Տեսրակէս

Շարունակուած էջ 16-էն

պատանին գործածեց, մեր աննման Լուսինէն փրկելով եւ մեր հայ ազգին այս գանձին կեանք տալով: Այդ գրուցը անջնջելիօրէն մաքիս մէջ դրոշմուցեալ, որպէս Լուսինէ Չաքարեանէն թանկագին յուշ:

Իսկ ես, այդ օրուրէն է ի վեր գիտցայ Փոցիսով գետին եւ Վրաստանի Ախլցիսա շրջանին ուր ըլլալը:

Այսօր, Լուսինէ Չաքարեանի Տուն-թանգարանի բացման առիթով, սրտանց կը շնորհաւորեմ բոլոր այն բարերարները եւ հայրենի մեր պետութեան պատասխանատուները, որ այդ Տուն-թանգարանին կառուցումով արժանի գնահատանք մը ըրած եղան յաւերժի այս ճամբորդին, որ Լուսինէ Չաքարեան կը կոչուի:

Յարգանք եւ խոնարհում անոր յաւերժալոյս յիշատակին:

Մայրերու Օրուայ Տօնակատարութիւն

Շարունակուած էջ 16-էն

ցիչներու Տան անդամ Տիար Վարուժան Ոսկանեանին ի պատիւ ճաշկերոյթ մը տրուեցաւ Միացեալ մարմնի կողմէ, որուն մաս կազմեց մեր միութիւնը եւ մօտէն ծանօթացանք Պրն. Ոսկանեանին:

* Հայ մամուլին եւ հայրենական գանազան ծրագիրներուն իրաքահայ Ընտանեկան Միութիւնը միշտ ալ իր նպաստը եւ նիւթականը

հասցուցած է առ որ անկ է: * Ապրիլ ամսուայ սկիզբը ճաշկերոյթ պարահանդէս մը կազմակերպեց Պրպանքի Olive ճաշարանին մէջ, որուն հասոյթը ամբողջութեամբ տրամադրուած էր միութեան Շաբաթօրեայ վարժարանի ծախսերուն: Ներկաները հայկական երգերու եւ պարերանակներու վրայ պարելով, հաճելի գիշեր մը ունեցան:

Խ.Գ.

Logo for SYRIAN ARMENIAN RELIEF FUND with text: Զօրացիւք Օժանդակէնք Փրկէնք. Syrian Armenian Relief Fund P.O. Box 1948 Glendale, CA 91209-1948 www.syrianarmenianreliefund.org

Subscription form for MASSIS Weekly with fields for Name, Address, City, State, Zip Code, Country, Tel, Email and pricing: Yes, I wish to subscribe to Massis Weekly. Enclosed a check for (one year) * \$50,00 * \$100,00 (first class) for USA \$ 125,00 (Air Mail) for Canada. \$ 250,00 (Air Mail) Overseas.

ՄԱՐԶԱԿԱՆ

«Բաւարիա»-ն իր Պատմութեան Մէջ 19-րդ Անգամ Դարձաւ Գերմանիայի Գաւաթակիր



Պեւ լինում կայացաւ Գերմանիայի Գաւաթի խաղարկութեան եզրափակիչը, որտեղ միմիանց հետ մրցեցին «Լեյպցիգ»-ն ու «Բաւարիա»-ն: Խաղն աւարտուեց միւսխեսցիներէ յաղթանակով 2:0 հաշուով:

29-րդ րոպէին հաշիւը բացել է Ռոբերտ Լեւանդովսկին: 78-րդ րոպէին իր թիմի առաւելութիւնը կրկնապատկել է Կինգսլի Կոմանը: Խաղավերջում Լեւանդովսկին եւս մէկ անգամ է գրաւել մրցակցի դարպասն իր հաշուին դուբլ գրանցելով:

Այսպիսով, «Բաւարիա»-ն իր պատմութեան մէջ 19-րդ անգամ դարձաւ Գերմանիայի գաւաթակիր:

«Արսենալը» Գրաւիչ Առաջարկների Դէպքում Կը Վաճառի Մխիթարեանին Եւ Օզիլին



Լոնտոնի «Արսենալը» ամառային տրանսֆերային պատուհանի ժամանակ չի խոչընդոտի Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի եւ Գերմանիայի հաւաքականի նախկին կիսապաշտպան Մեսութ Օզիլի տեղափոխութիւններին, եթէ ստանայ գրաւիչ առաջարկներ, հաղորդում է thesun.co.uk-ը:

Այս թեմայով հայ ֆուտպոլիստը մեկնաբանութիւն չի արել, իսկ Մեսութ Օզիլը նշել է, որ դեռ երկու տարուայ պայմանագիր ունի եւ այլ ծրագրեր այս պահին չի դիտարկում: Մխիթարեանի պայմանագիրը եւս նախատեսուած է մինչեւ 2021թ. Յունիս:

Յիշեցնենք, որ Մխիթարեանը 2018թ. Յունուարին է «Մանչեսթեր Եունայթեդից» տեղափոխուել «Արսենալ» չի լիացի յարձակուող Ալեքսիս Սանչեսի տրանսֆերի գործարքով:

Հենրիխ Մխիթարեանն առաջիկայ ամրանը կարող է տեղափոխուել Իտալիա: 30-ամեայ խաղացողի ծառայութիւններով հետաքրքրուած է «Միլան»-ը: Նշուած է, որ Մխիթարեանի տեղափոխութիւնը շատ հեշտ կարող է կայանալ, քանի որ ֆուտպոլիստի գործակալ Մինո Ռայոլան բաւականին ջերմ յարաբերութիւններ մէջ է «ռոստոնէրներ»-ի դեկավարութեան հետ:

Ընթացիկ մրցաշրջանում Մխիթարեանը մասնակցել է 39 խաղի՝ դառնալով 6 կոլի եւ 7 կոլային փոխանցման հեղինակ:

ՊՍԺ-ն Երկարաձգեց Պայմանագիրը Թոմաս Տուխելի Դեմ

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ն երկարաձգեց պայմանագիրը թիմի գլխաւոր մարզիչ Թոմաս Տուխելի հետ: 45-ամեայ գերմանացի մասնագէտի նոր պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2021թ. Յունիս, յայտնում է փարիզեան ակումբի մամուլի ծառայութիւնը:

Թոմաս Տուխելը ՊՍԺ-ն գլխաւորել է անցած տարի եւ նորամուտի մրցաշրջանում թիմի հետ նուաճել Ֆրանսայի ախոյեանի կոչումը բացառիկ ցուցանիշով: ՊՍԺ-ն դարձաւ առաջին թիմը, որը Ֆրանսայի առաջնութեան բոլոր հանդիպումներում կոլ խփեց:

Արթուր Ալեքսանեանը Ոսկէ Մետալ Է Նուաճել Դազախստանում

Յունահունիական ոճի ըմբիշ, Օլիմպիական խաղերի, Եւրոպայի եւ աշխարհի ախոյեան Արթուր Ալեքսանեանը յաղթանակ է տօնել Ղազախստանի միջազգային մրցաշարում:

97 կգ քաշային կարգում Ալեքսանեանը եզրափակչում մրցել է ռուս Ալեքսանդր Գոլովինի հետ եւ յաղթել նրան:

2018 Դեկտեմբերի յետոյ սա Ալեքսանեանի առաջին միջազգային մրցաշարն էր: Օլիմպիական ախոյեանն այս ընթացքում բուժումներ անցաւ ԱՄՆ-ում:

Հայաստանի միւս երկու ներկայացուցիչները՝ Արթուր Շահինեանը եւ Արմէն Մելիքեանը պարտուել են պրոնգէ մետալի համար գոտեմարտերում:



Ֆինլանդիայի Հաւաքականը՝ Հոկեյի Աշխարհի Ախոյեան

Տափօղակով հոկեյի Ֆինլանդիայի հաւաքականը պատմութեան մէջ երրորդ անգամ դարձաւ աշխարհի ախոյեան:

Ս լ ո վ ա կ ի ա յ ու մ աւարտուած աշխարհի առաջնութեան եզրափակչում ֆինները 3:1 հաշուով ուժեղ գոտուցին Գանարայի հաւաքականից:

Պրոնգէ մետալակիր դարձաւ Ռուսաստանի հաւաքականը, որը երրորդ տեղի համար խաղում բուլիտներով յաղթեց չեխերին:

Մրցաշարի ամենաարժեքաւոր խաղացող ճանաչուեց Գանատայի հաւաքականի յարձակուող Մարկ Սթրոունը, որը 10 խաղում դարձաւ 8 կոլի հեղինակ եւ արժանացաւ նաեւ լաւագոյն ռմբարկուի մրցանակին:

Յիշեցնենք, որ Ֆինլանդիայի հաւաքականը քառորդ եզրափակչում պայքարից դուրս էր թողել աշխարհի գործող ախոյեան Շուեդիայի հաւաքականին, իսկ կիսաեզրափակչում ուժեղ էր գոտուել ռուսներին: Ֆիններն աշխարհի ախոյեան դարձել էին նաեւ 1995-ին եւ 2011-ին:



Սերխիո Ռամոսը Ցանկանում Է Հեռանալ Մադրիդի «Ռեալից»

Մադրիդի «Ռեալի» աւագ Սերխիո Ռամոսը ցանկանում է հեռանալ Արքայական ակումբից, յայտնում է El Chiringuito-ն: Սպանացի ֆուտպոլիստը դժգոհ է թիմում ընթացող փոփոխութիւններից եւ աւարտուած մրցաշրջանում տեղի ունեցած ներթիմային խմորումներից:

Սերխիո Ռամոսի ծառայութիւններով հետաքրքրուած են անգլիական «Մանչեսթեր Եունայթեդն» ու ֆրանսական ՊՍԺ-ն, որոնք նախկինում մերժում են ստացել «Ռեալից», սակայն այս ամռանը կարող է լինել հակառակ գործընթաց, գրում է Marca-ն:

33-ամեայ ֆուտպոլիստը «Ռեալ» է տեղափոխուել «Սելիլիայից» 2005 թուականին: Նա սպանիայի քառակի ախոյեան է, կրկնակի գաւաթակիր, եռակի սուպերգաւաթակիր, Ախոյեանների լիգայի քառակի յաղթող է, Եւրոպայի եռակի սուպերգաւաթակիր, աշխարհի ակումբային քառակի ախոյեան:

Սպանիայի հաւաքականի կազմում Ռամոսը դարձել է 2010թ. աշխարհի ախոյեան, 2008թ. եւ 2012թ. Եւրոպայի ախոյեան:

«Մանչեսթեր Եունայթեդ»-ը Բանակցութիւններ Է Սկսել Գրիզմանի Դեմ

Մադրիդի «Ատլետիկո»-ի յարձակուող Անտուան Գրիզմանը կարող է կարիերան շարունակել Անգլիայում: Այս մասին տեղեկացնում է The Independent-ը:

Աղբիւրի փոխանցմամբ՝ «Մանչեսթեր Եունայթեդ»-ը հետաքրքրուած է ֆրանսացի ֆուտպոլիստի ծառայութիւններով եւ արդէն բանակցութիւններ է սկսել նրա հետ: Յիշեցնենք, որ 28-ամեայ ֆուտպոլիստը վերջերս էր յայտնել «Ատլետիկո»-ից հեռանալու որոշման մասին: Նրա տրանսֆերը ձեռք բերելու գլխաւոր հաւակնորդը «Բարսելոնա»-ն է, սակայն կատալոնական ակումբը վստահ չէ, որ պատրաստ է 108 միլիոն եւրօ վճարել:

Հաղորդում է, որ «կարմիր սատանաներ»-ը կարող են օգտուել առիթից եւ թիմ հրաւիրել Գրիզմանին:

